

## Գլխավոր Ասամբլեա

Վաթսուհիների մասնաճյուղ  
Օրակարգի 67 (բ) կետ

### Որոշում՝ ընդունված Գլխավոր Ասամբլեայի կողմից

[առանց Գլխավոր կոմիտեի հղման]

61/106. ԿՈՆՎԵՆՏԻԱ ԶԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ  
ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## *Գլխավոր Ասանքլեան*

*Նկատի առնելով* իր թիվ 56/168 որոշումը՝ ընդունված 2001թ. դեկտեմբերի 19-ին, որով որոշվել էր հիմնել Հատուկ Կոմիտե, որը բաց է ՄԱԿ-ի բոլոր անդամ և դիտորդ պետությունների մասնակցության համար՝ ուսումնասիրելու առաջարկներ, որոնք վերաբերում են համապարփակ և միասնական միջազգային մի կոնվենցիայի, որը պետք է սատարի ու պաշտպանի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և արժանապատվությունը՝ հիմնվելով իրականացվող աշխատանքի նկատմամբ համապարփակ մոտեցման վրա, որը կիրառվել է սոցիալական զարգացման, մարդու իրավունքների և խտրականության բացառման ոլորտներում և հաշվի առնելով Մարդու իրավունքների և Սոցիալական զարգացման հանձնաժողովների հանձնարարականները

*Նկատի առնելով* նաև նախկինում ընդունված համապատասխան որոշումները, որոնցից ամենավերջինը թիվ 60/232 է՝ ընդունված 2005թ. դեկտեմբերի 23-ին, ինչպես նաև Սոցիալական զարգացման և Մարդու իրավունքների հանձնաժողովների համապատասխան որոշումները

*Ողջունելով* միջկառավարական և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև մարդու իրավունքների ազգային ինստիտուտների արժեքավոր ներդրումները Հատուկ կոմիտեի գործունեության մեջ.

1. *արտահայտում* է իր բավարարվածությունը Հատուկ կոմիտեի աշխատանքի վերաբերյալ այն բանի կապակցությամբ, որ այն ավարտել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ կոնվենցիայի և Հռչակագրի Ընտրողական արձանագրության նախագծերի մշակումը
2. *ընդունում* է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ կոնվենցիան և Հռչակագրի Ընտրողական արձանագրությունը, որը հանդիսանում է սույն որոշման հավելվածը. այն հնարավոր կլինի ստորագրել ՄԱԿ-ի՝ Նյու Յորքում գտնվող կենտրոնական գրասենյակում սկսած 2007թ. մարտի 30-ից
3. *կոչ է անում* պետություններին՝ քննարկելու Կոնվենցիայի և Ընտրողական արձանագրության ստորագրումը և վավերացումը՝ որպես գերակա ուղղություն և արտահայտում է այն հույսը, որ դրանք ուժի մեջ կհամարվեն հնարավորինս արագ
4. *դիմում* է Գլխավոր քարտուղարին՝ խնդրելով տրամադրել անձնակազմ և շենքային պայմաններ, որոնք անհրաժեշտ են անդամ պետությունների և Կոմիտեի համատեղ համաժողովի արդյունավետ աշխատանքի համար՝ Կոնվենցիայի և Ընտրողական արձանագրության շուրջ՝ օրինական ուժ ստանալուց հետո, ինչպես նաև Կոնվենցիայի և Ընտրողական արձանագրության վերաբերյալ տեղեկատվության տարածման համար
5. *դիմում* է Գլխավոր քարտուղարին՝ խնդրելով պահպանել այն չափորոշիչները և ուղեցույցները, որոնք անհրաժեշտ են շենքերի և ծառայությունների մատչելությունը ապահովելու համար ՄԱԿ-ի համակարգում՝ հաշվի առնելով Կոնվենցիայի համապատասխան դրույթները՝ մասնավորապես վերանորոգումների համար

6. *դիմում է ՄԱԿ-ի գործակալություններին և կազմակերպություններին և հրավիրում միջկառավարական և հասարակական կազմակերպություններին՝ ջանքեր գործադրելու Կոնվենցիայի և Ընտրողական արձանագրության վերաբերյալ տեղեկատվություն տարածելու համար:*
7. *դիմում է Գլխավոր քարտուղարին՝ խնդրելով Գլխավոր ասամբլեայի երկրորդ նստաշրջանին ներկայացնել Կոնվենցիայի և Ընտրողական արձանագրության կարգավիճակի վերաբերյալ հաշվետվություն, ինչպես նաև սույն որոշման իրականացման վերաբերյալ հաշվետվություն՝ “Չաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ կոնվենցիայի” վերնագրի տակ:*

*76-րդ սլենար հանդիպում  
2006թ. դեկտեմբերի 13*

## **Հավելված 1**

### **Կոնվենցիայի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին**

#### **Նախաբան**

*Սույն կոնվենցիայի միացող անդամ պետությունները.*

(ա) *հաշվի առնելով ՄԱԿ-ի կանոնադրության դրույթները, որոնք ճանաչում են բոլոր մարդկային էակների արժանապատվությունը և արժեքը, ինչպես նաև նրանց հավասար ու անօտարելի իրավունքները՝ որպես աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմքեր*

(բ) *հաշվի առնելով, որ ՄԱԿ-ը Մարդու իրավունքների համընդհանուր կոնվենցիայում և Մարդու իրավունքների միջազգային դրույթներում հայտարարել ու համաձայնել է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավունքներ և ազատություններ, որոնք նկարագրված են այդ փաստաթղթերում՝ առանց որևէ բացառության*

(գ) *վերահաստատելով մարդու բոլոր իրավունքների ու հիմնարար ազատությունների համընդհանրությունը, անբաժանելիությունը, փոխադարձ կախվածությունը և փոխկապակցվածությունը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար դրանցից օգտվելու հնարավորությունների երաշխավորումը՝ առանց խտրականության*

(դ) *հիշատակելով տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ միջազգային դրույթները, Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դրույթները, Ռասայական խտրականության բոլոր ձևերի բացառման վերաբերյալ միջազգային կոնվենցիան, Կանանց դեմ ուղղված խտրականության բոլոր ձևերի բացառման վերաբերյալ կոնվենցիան, Կտտանքների ու այլ դաժան, անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի ձևերի վերաբերյալ կոնվենցիան, Երեխայի իրավունքների վերաբերյալ կոնվենցիան և Բոլոր միգրանտ աշխատողների ու նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային կոնվենցիան*

(ե) *գիտակցելով, որ հաշմանդամության գաղափարը շարունակական զարգացում է ապրում և արդյունք է որոշակի անկարողություններ ունեցող*

մարդկանց հետ հարաբերությունների և վարքային ու միջավայրին առնչվող արգելքների, որոնք խոչընդոտում են նրանց լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը հասարակության կյանքին՝ մյուսներին հավասար հիմունքներով

(գ) *գիտակցելով* այն սկզբունքների ու քաղաքականությանն առնչվող ուղեցույցների կարևորությունը, որոնք պարունակվում են Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ գործողությունների համաշխարհային ծրագրում և Հաշմանդամություն ունեցող անձանց համար հնարավորությունների հավասարեցման ստանդարտ կանոններում և ազդեցություն ունեն քաղաքականությունների, ծրագրերի ու գործողությունների սատարման, ձևավորման և գնահատման վրա՝ ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում և նպատակ ունենալով էլ ավելի հավասարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունները

(ե) *շեշտելով* հաշմանդամությանն առնչվող հարցերի համար համընդհանուր լուծումների փնտրման անհրաժեշտությունը՝ որպես կայուն զարգացման համապատասխան ռազմավարությունների օրգանական մաս

(ը) *գիտակցելով* նաև, որ ցանկացած անձի դեմ ուղղված խտրականությունը, որը հիմնված է հաշմանդամության փաստի վրա, ներկայացնում է մարդկային էակի արժանապատվության ու արժեքի մասին խաթարում

(թ) ավելին՝ *գիտակցելով* հաշմանդամություն ունեցող անձանց բազմազանությունը

(ժ) *գիտակցելով* հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մարդկային իրավունքների սատարման ու պաշտպանության անհրաժեշտությունը, ներառյալ այն անձանց, ովքեր կարիք ունեն ինտենսիվ աջակցության

(ի) *մտահոգված լինելով*, որ չնայած տարբեր մեթոդներին ու գործողություններին՝ հաշմանդամություն ունեցող անձանց առաջ շարունակում են ծառանալ արգելքներ՝ հասարակության կյանքում նրանց հավասար մասնակցության և մարդկային իրավունքների ոտնահարման իմաստով՝ աշխարհի տարբեր ծայրերում

(լ) *գիտակցելով* յուրաքանչյուր երկրում հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի պայմանների բարելավման համար անհրաժեշտ միջազգային համագործության կարևորությունը, մասնավորապես զարգացող երկրներում

(խ) *գիտակցելով* գոյություն ունեցող և պոտենցիալ ներդրումների արժեքը, որոնք իրականացվել են հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց համայնքների ընդհանուր բարեկեցության ու բազմազանության գործին և, որ նրանց կողմից իրենց իրավունքների ու հիմնարար ազատությունների լրիվ իրացման սատարումը և լիակատար մասնակցությունը կբերի նրանց բարեկեցության գիտակցմանն ու լուրջ բարելավումների՝ հասարակական, մարդկային, սոցիալական ու տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման իմաստով

(ծ) *գիտակցելով* հաշմանդամություն ունեցող անձանց համար իրենց անձնական անկախության և ինքնուրույնության, ներառյալ սեփական որոշումներ կայացնելու ազատության կարևորությունը

(կ) *հաշվի առնելով*, որ հաշմանդամություն ունեցող անձինք պետք է հնարավորություն ունենան ակտիվորեն մասնակցելու քաղաքականությունների և ծրագրերի վերաբերյալ որոշումների կայացմանը, ներառյալ այն հարցերում, որոնք ազդեցություն ունեն իրենց կյանքի վրա

(հ) *մտահոգվելով*, որ հաշմանդամություն ունեցող անձանց կյանքում առկա են դժվարություններ՝ բազմակի կամ խիստ ծանր խտրականության տարրեր՝ կապված ռասսայի, գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային, էթնիկական կամ սոցիալական ծագման, սեփականության, ծննդյան, տարիքի կամ այլ կարգավիճակի հետ

(ձ) *գիտակցելով*, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները հաճախ տանը և դրսում ավելի մեծ ռիսկերի են ենթարկվում՝ բռնության, վնասվածքների կամ չարաշահման, անտեսման, վատ վերաբերմունքի կամ շահագործման

(ղ) *գիտակցելով*, որ հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է կարողանան լիովին վայելել իրենց իրավունքներն ու հիմնարար ազատությունները՝ այլ երեխաների հետ հավասարապես, և, հաշվի առնելով երեխայի իրավունքների վերաբերյալ կոնվենցիային միացած անդամ պետությունների կողմից այդ կապակցությամբ ունեցած հանձնառությունները

(ճ) *շեշտելով* գենդերային մոտեցման կարևորությունը՝ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից մարդկային իրավունքների ու հիմնարար ազատությունների լիակատար իրացմանը սատարող բոլոր ծրագրերում

(մ) *շեշտելով* այն փաստը, որ հաշմանդամություն ունեցող անձանց մեծ մասը ապրում է աղքատության պայմաններում, և, այս կապակցությամբ հաշվի առնելով աղքատության բացասական ազդեցության դերի ըմբռնման կարևորությունը

(յ) *հաշվի առնելով*, որ խաղաղության և ապահովության պայմանների պահպանումը, որոնք հիմնված են ՄԱԿ-ի Կանոնադրության նպատակների ու սկզբունքների նկատմամբ խորը ակնածանքի և մարդու իրավունքների պաշտպանության հիմնական մեթոդների հետ համապատասխանության վրա, հաշմանդամություն ունեցող անձանց լիակատար պաշտպանության անքակտելի մասն են կազմում՝ մասնավորապես զինված ընդհարումների և այլ պետությունների կողմից բռնազավթման ժամանակ

(ն) *գիտակցելով* ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և մշակութային միջավայրի մատչելիության կարևորությունը, ինչպես նաև առողջապահական ու կրթական տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը՝ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց իրավունքների ու հիմնարար ազատությունների իրացման հնարավորության հարցում

(շ) *գիտակցելով*, որ անհատը, որը պարտականություններ ունի այլ անհատների ու իր համայնքի նկատմամբ, ունի նաև պատասխանատվություն՝ ձգտելու այն իրավունքների իրացմանն ու պահպանմանը, որոնք ճանաչված են Մարդու իրավունքների միջազգային հայտարարագրով:

(ո) *համոզված լինելով*, որ ընտանիքը հասարակության բնական ու հիմնարար բջիջն է և հասարակության և պետության կողմից պաշտպանության իրավունք ունի, ինչպես նաև որ հաշմանդամություն ունեցող մարդիկ և նրանց

ընտանիքի անդամները պետք է ստանան անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որն ընտանիքին հնարավորություն կտա ներդրում ունենալու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լիակատար և հավասար իրացմանը

(չ) *համոզված լինելով*, որ միջազգային համապարփակ և ինտեգրալ կոնվենցիան, որի նպատակը կլինի սատարել ու պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ու արժանապատվությունը, կարևոր ներդրում կունենա նրանց սոցիալական խորը անհավասարության փոփոխման և նրանց մասնակցությունը սատարելու հարցում՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում՝ այլոց հետ համահավասար հնարավորություններով՝ զարգացող և զարգացած երկրներում:

*Համաձայնել է հետևյալին.*

## **Հոդված 1. Նպատակ**

Սույն կոնվենցիայի նպատակն է սատարել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մարդկային իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար և հավասար իրացումը, ինչպես նաև հարգալից վերաբերմունքը նրանց արժանապատվության նկատմամբ:

Հաշմանդամություն ունեցող անձինք ներառում են այն անձանց, որոնք ունեն երկարաժամկետ ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական դժվարություններ, որոնք, տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում արգելակում են նրանց լիակատար և արդյունավետ մասնակցությունը հասարակության կյանքում՝ մյուսների հետ հավասար:

## **Հոդված 2. Սահմանումներ**

Սույն կոնվենցիայի նպատակների համար.

"հաղորդակցություն" տերմինը ներառում է լեզուները և տեքստի պատկերումը, Բրեյլի, շոշափողական հաղորդակցության, մեծ տառերով տպագրության, մատչելի մուլտիմեդիայի, ինչպես նաև գրավոր, լսողական, լեզվական, մարդու կողմից ընթերցվող և հաղորդակցության օգնենտատիվ և այլընտրանքային մեթոդներ, միջոցներ ու ձևաչափեր, ներառյալ մատչելի տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաները:

"Լեզուներ" տերմինը ներառում է խոսակցական և նշանների լեզուն, ինչպես նաև ոչ խոսակցական լեզվի այլ ձևերը:

"Խտրականություն՝ հիմնված հաշմանդամության վրա" տերմինը նշանակում է ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում՝ հիմնված հաշմանդամության վրա, որի նպատակը կամ արդյունքն է՝ վնասել կամ չեզոքացնել մարդու արժեվորումը, նրա կողմից մյուսների հետ հավասար այն բոլոր մարդկային իրավունքների և հիմնարար ազատությունների վայելումը կամ իրացումը, որոնք առկա են քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ ցանկացած այլ ոլորտներում: Այն ներառում է խտրականության բոլոր ձևերը, ներառյալ համապատասխան շտկումներ կատարելուց հրաժարումը:

"Համապատասխան շտկումներ" տերմինը նշանակում է անհրաժեշտ և հարիր շտկումներ կամ փոփոխություններ, որոնք չեն պահանջում անհամեմատ մեծ ջանքեր և անհրաժեշտ են կոնկրետ դեպքերում՝ ապահովելու համար, որ

հաշմանդամություն ունեցող անձը մյուսների հետ հավասար իրացնի իր բոլոր մարդկային իրավունքները և հիմնարար ազատությունները:

"Չամընդհանուր դիզայն" տերմինը նշանակում է ապրանքների, միջավայրերի, ծրագրերի ու ծառայությունների դիզայն, որը դրանք առավելագույնս օգտագործելի է դարձնում բոլոր մարդկանց համար՝ առանց շտկումների ու մասնագիտացված դիզայնի անհրաժեշտության: "Չամընդհանուր դիզայնը" չպետք է բացառի օժանդակ հարմարանքները հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի համար, եթե դրա անհրաժեշտությունը կա:

### **Հոդված 3.**

#### **Ընդհանուր սկզբունքներ**

Սույն կոնվենցիանյի սկզբունքներն են.

(ա) հարգանք արժանապատվության, անձնական անկախության նկատմամբ, ներառյալ սեփական ընտրություն կատարելու ազատությունը և մարդկանց անկախության իրավունքը

(բ) խտրականության բացառում

(գ) հասարակության կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցություն և ներառականություն

(դ) հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց տարբերությունների նկատմամբ և նրանց ընդունելու անհրաժեշտություն՝ որպես մարդկային ցեղի բազմազանության և հումանիստական սկզբունքների բաղկացուցիչ մաս

(ե) հնարավորությունների հավասարություն

(զ) մատչելիություն

(է) կանանց և տղամարդկանց միջև հավասարություն

(ը) հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների և իրենց ինքնությունը պահպանելու նրանց իրավունքի նկատմամբ

### **Հոդված 4.**

#### **Ընդհանուր պարտավորություններ**

1. Անդամ պետությունները հանձն են առնում ապահովելու և սատարելու հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մարդկային իրավունքները և հիմնարար ազատությունները՝ առանց հաշմանդամության վրա հիմնված որևէ խտրականության: Այս նպատակով անդամ պետությունները հանձն են առնում.

(ա) ընդունել համապատասխան օրենսդրություն, վարչական և այլ միջոցներ, որոնք կապահովեն սույն կոնվենցիայով սահմանված իրավունքների իրացումը

(բ) գործադրել համապատասխան քայլեր, ներառյալ օրենսդրություն, որոնք անհրաժեշտ են փոփոխելու կամ վերացնելու գոյություն ունեցող օրենքները, կանոնակարգերը, սովորույթները և պրակտիկան, որոնք ներկայացնում են խտրականություն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ

(գ) հաշվի առնել հաշմանդամություն ունեցող անձանց մարդկային իրավունքների պաշտպանությունը և սատարումը բոլոր քաղաքականություններում և ծրագրերում

(դ) ձեռնպահ մնալ ցանկացած գործողության կամ պրակտիկայի մասնակցելուց, եթե դրանք չեն համապատասխանում սույն կոնվենցիայի

սկզբունքներին և ապահովել, որ իշխանություններն ու հաստատությունները գործեն սույն կոնվենցիային համապատասխան

(ե) գործադրել համապատասխան միջոցներ՝ բացառելու խտրականությունը, որը հիմնված է հաշմանդամության վրա՝ որևէ անձի, կազմակերպության կամ մասնավոր հիմնարկի կողմից

(զ) իրականացնել և սատարել հետազոտություններ և կատարելագործումներ համընդհանուր օգտագործման ապրանքների, ծառայությունների, սարքավորումների և շենքերի զարգացման ոլորտում, ոլորտներ, որոնք սահմանված են սույն կոնվենցիայի Յոթերորդ 2-ում և պահանջում են նվազագույն շտկումներ և ծախսումներ՝ բավարարելու հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքները, սատարելու դրանց արդյունքների առկայությունը և օգտագործումը, ինչպես նաև համընդհանուր դիզայնի կիրառումը՝ դրանց չափորոշիչների ու ուղեցույցների մշակման ժամանակ

(է) իրականացնել և սատարել նոր տեխնոլոգիաների վերաբերյալ հետազոտություններ և կատարելագործումներ, ինչպես նաև սատարել դրանց առկայությունը ու լայնատարած օգտագործումը, ներառյալ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները, շարժունակությունն ավելացնող օժանդակ սարքերը և աջակցող տեխնոլոգիաները, որոնք համապատասխանում են հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին՝ գերակայությունը տալով այն տեխնոլոգիաներին, որոնք նվազագույն ծախսատարություն ունեն

(ը) մատչելի տեղեկատվություն տրամադրել հաշմանդամություն ունեցող անձանց շարժունակությունն ավելացնող օժանդակ սարքերի և աջակցող տեխնոլոգիաների միջոցով, ներառյալ նոր տեխնոլոգիաները, ինչպես նաև սատարել օժանդակող և աջակցող ծառայությունների ու հաստատությունների այլ ձևերին

(թ) սատարել մասնագետների ու հաշմանդամների հետ աշխատող անձնակազմի ուսուցումը այն իրավունքների վերաբերյալ, որոնք սահմանվում են սույն կոնվենցիայում՝ նպատակ ունենալով բարելավել այն աջակցությունն ու ծառայությունները, որոնք երաշխավորված են այդ իրավունքներով:

2. Ինչ վերաբերում է տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին, յուրաքանչյուր անդամ պետություն պետք է գործադրի միջոցներ՝ իր առկա ռեսուրսների առավելագույնի չափով, և, որտեղ հնարավոր է, միջազգային համագործակցության շրջանակներում, նպատակ ունենալով աստիճանաբար հասնելու այդ իրավունքների լիակատար իրացմանը՝ առանց բացառելու այն պարտականությունները, որոնք սահմանված են սույն կոնվենցիայում՝ որպես անհապաղ իրացվելիք՝ համաձայն միջազգային օրենքների:

3. Օրենսդրության և քաղաքականությունների մշակման ու իրականացման ընթացքում, որոնք միտված կլինեն սույն կոնվենցիայի դրույթների իրականացմանը, ինչպես նաև այն որոշումների կայացման ընթացքում, որոնք վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց, անդամ պետությունները պետք է խորհրդակցեն ու ակտիվորեն ներգրավեն նրանց, ներառյալ հաշմանդամություն ունեցող երեխաներին՝ նրանց ներկայացնող կազմակերպությունների միջոցով:

4. Սույն կոնվենցիայում պարունակվող որևէ դրույթ չպետք է աղեցություն ունենա ցանկացած այն դրույթների վրա, որոնք ավելի են նպաստում հաշմանդամների իրավունքների իրացմանը և կարող են պարունակվել անդամ պետությունների օրենքներում կամ միջազգային օրենքում, որը գործում է տվյալ երկրում: Չպետք է



լինի ոչ մի սահմանափակում կամ հրաժարում մարդկային իրավունքներից կամ հիմնարար ազատություններից, որոնք ճանաչված են կամ գործում են ցանկացած անդամ պետությունում՝ համաձայն օրենքի, կոնվենցիաների, կանոնակարգերի կամ սովորույթների այն պատրվակով, որ սույն կոնվենցիան դրանք չի ճանաչում կամ ճանաչում է ավելի պակաս չափով:

5. Սույն կոնվենցիայի դրույթները պետք է գործեն ֆեդերալ կառուցվածք ունեցող պետությունների բոլոր մասերում՝ առանց որևէ սահմանափակման կամ բացառության:

#### **Հոդված 5.**

##### **Հավասարություն և խտրականության բացառում**

1. Անդամ պետությունները գիտակցում են, որ բոլոր անհատները հավասար են օրենքի առաջ և ունեն օրենքով սահմանված օրինական պաշտպանության և հավասար հնարավորությունների իրավունք:

2. Անդամ պետությունները պետք է արգելեն ցանկացած խտրականություն՝ հիմնված հաշմանդամության վրա և երաշխավորեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց հավասար և արդյունավետ օրինական պաշտպանությունը խտրականությունից:

3. Հավասարության ապահովման և խտրականության բացառման համար անդամ պետությունները պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները համապատասխան կերպով հաշվի առնվեն:

4. Այն կոնկրետ քայլերը, որոնք անհրաժեշտ են՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար դե ֆակտո հավասարության հասնելու ու այդ գործընթացը արագացնելու համար, չեն կարող դիտվել որպես խտրականություն՝ սույն կոնվենցիայի համաձայն:

#### **Հոդված 6.**

##### **Հաշմանդամ կանայք**

1. Անդամ պետությունները գիտակցում են, որ հաշմանդամ կանայք և աղջիկները ենթարկվում են խտրականության բազմաթիվ ձևերի և այդ իմաստով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ապահովելու համար նրանց բոլոր մարդկային իրավունքների և հիմնարար ազատությունների լիակատար և հավասար իրացումը:

2. Անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն, որ ապահովեն կանանց լիակատար զարգացումը, առաջխաղացումը և կարողությունների հզորացումը՝ նպատակ ունենալով երաշխավորել մարդկային իրավունքների և հիմնարար ազատությունների իրացումը և վայելումը՝ համաձայն սույն կոնվենցիայի:

#### **Հոդված 7.**

##### **Հաշմանդամ երեխաներ**

1. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները հաշմանդամություն ունեցող երեխաների կողմից մարդկային իրավունքների և հիմնարար ազատությունների իրացման համար՝ մյուս երեխաների հետ հավասարապես:

2. Հաշմանդամ երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում երեխայի շահերը պետք է լինեն կարևորագույն նկատառումը:

3. Անդամ պետությունները պետք է երաշխավորեն, որ հաշմանդամ երեխաները ունենան իրավունք՝ ազատորեն արտահայտելու իրենց կարծիքները բոլոր այն

հարցերի վերաբերյալ, որոնք ազդեցություն ունեն իրենց կյանքի վրա. նրանց կարիքներին անհրաժեշտ է համապատասխան ուշադրություն դարձնել՝ համաձայն նրանց տարիքին ու հասունությանը՝ մյուս երեխաների հետ հավասարապես. նրանք պետք է ստանան հաշմանդամությունից բխող և տարիքին համապատասխան օժանդակություն՝ իրենց իրավունքը իրացնելու համար:

## **Հոդված 8.**

### **Իրազեկվածության բարձրացում**

1. Անդամ պետությունները հանձն են առնում իրականացնելու անհապաղ, արդյունավետ և համապատասխան միջոցներ.

(ա) բարձրացնելու իրազեկվածությունը հասարակության մեջ, ներառյալ ընտանիքի մակարդակում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների վերաբերյալ և սատարելու հարգալից վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ

(բ) պայքարելու կարծրատիպերի, նախապաշարմունքների և վնասակար պրակտիկայի դեմ, որոնք առնչվում են հաշմանդամություն ունեցող անձանց հետ, մասնավորապես սեռային ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված

(գ) բարձրացնելու իրազեկվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց կարողությունների ու ներդրման վերաբերյալ:

2. Այս նպատակով իրականացնող միջոցները ներառում են.

(ա) նախաձեռնել կամ իրականացնել հասարակության իրազեկվածության բարձրացմանն ուղղված արդյունավետ քարոզարշավներ, որոնց նպատակն է.

- (i) բարձրացնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը
- (ii) սատարել հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ դրական ընկալումները և սոցիալական իրազեկվածությունը
- (iii) բարձրացնել իրազեկվածությունը հաշմանդամություն ունեցող անձանց հմտությունների, արժեքների և կարողությունների, ինչպես նաև աշխատավայրում և աշխատանքի շուկայում նրանց ներդրումների վերաբերյալ

(բ) կրթության բոլոր մակարդակներում, ներառյալ վաղ հասակի երեխաների մոտ սատարել հարգանք հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ

(գ) քաջալերել բոլոր ՁԼՄ-ներին՝ պատկերելու հաշմանդամություն ունեցող անձանց սույն կոնվենցիայի դրույթների համապատասխան

(դ) սատարել իրազեկվածության բարձրացման կամ ուսուցման ծրագրեր, որոնք վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց իրավունքներին:

## **Հոդված 9.**

### **Մատչելիություն**

1. Հաշմանդամություն ունեցող մարդկանց անկախ ապրելու և կյանքի բոլոր ասպեկտներում մասնակցելու հնարավորություն տալու նպատակով՝ անդամ

պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները՝ որպեսզի նրանց համար ապահովեն ֆիզիկական միջավայրի, տրանսպորտի, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցային տեխնոլոգիաների և համակարգերի, ինչպես նաև այլ շենքերի ու ծառայությունների մատչելիությունը, որոնք բաց են հասարակության առջև՝ քաղաքային և գյուղական վայրերում: Այս միջոցները, որոնք պետք է ներառեն խոչընդոտների և արգելքների վերահանումը և վերացումը, պետք է վերաբերեն նաև.

(ա) շենքերին, ճանապարհներին, տրանսպորտին, բացօթյա և փակ շինություններին, ներառյալ դպրոցները, բնակության համար նախատեսված տարածքը, բժշկական հիմնարկները և աշխատատեղերը

(բ) տեղեկատվությանը, հաղորդակցությանը և այլ ծառայությունների, ներառյալ էլեկտրոնային ծառայությունները:

2. Անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցները ձեռնարկեն հետևյալի համար.

(ա) զարգացնել, տարածել և հսկել հանրության համար բաց կամ նրան տրամադրվող շենքերի և ծառայությունների մատչելիության նվազագույն չափորոշիչների և ուղեցույցների իրականացումը

(բ) ապահովել, որ հանրության համար բաց կամ նրան տրամադրվող շենքեր կամ ծառայություններ ներկայացնող մասնավոր հիմնարկները հաշվի առնեն հաշմանդամություն ունեցող մարդկանց համար դրանց մատչելիության բոլոր ասպեկտները

(գ) շահագրգիռ կողմերի համար ուսուցում կազմակերպել հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառայող խնդիրների վերաբերյալ

(դ) հանրության համար բաց կամ նրան տրամադրվող շենքերում ունենալ նշաններ՝ Բրեյլի և հասկանալի ու մատչելի այլ ձևաչափերով

(ե) տրամադրել միջնորդային ծառայություններ՝ ուղեկցորդներ, նշանների լեզվի մասնագետ թարգմանիչներ՝ բարձրացնելու շենքերի և հասարակության համար բաց շինությունների մատչելիությունը

(զ) սատարել աջակցության այլ ձևերը՝ ապահովելու տեղեկատվության մատչելիությունը

(է) ապահովել նոր տեղեկատվական ու հաղորդակցային տեխնոլոգիաների ու համակարգերի, ներառյալ ինտերնետի, մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար

(ը) սատարել մատչելի տեղեկատվական ու հաղորդակցային տեխնոլոգիաների ու համակարգերի ստեղծումը, մշակումը, արտադրությունը և բաշխումը վաղ փուլում, որպեսզի նման տեխնոլոգիաները և համակարգերը մատչելի լինեն նվազագույն ծախսերով:

**Հոդված 10.  
Կյանքի իրավունք**

Անդամ պետությունները վերահաստատում են, որ յուրաքանչյուր մարդկային էակ ունի կյանքի իրավունք և պետք է բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկվեն՝ ապահովելու այս իրավունքի իրացումը հաշմանդամների կողմից՝ այլ անձանց հետ հավասարազոր կերպով:

### **Հոդված 11.**

#### **Ռիսկային և մարդասիրական ճգնաժամի իրավիճակներ**

Անդամ պետությունները պետք է՝ համապատասխան միջազգային օրենքներից բխող իրենց պարտավորությունների, ներառյալ միջազգային մարդասիրական օրենքները և մարդու իրավունքներին առնչվող միջազգային օրենքները, գործադրեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանությունը և ապահովությունը ռիսկային իրավիճակներում, ներառյալ զինված հակամարտությունները, մարդասիրական ճգնաժամերը և բնական աղետները:

### **Հոդված 12.**

#### **Հավասար ճանաչում օրենքի առաջ**

1. Անդամ պետությունները վերահաստատում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն օրենքի առաջ հավասար ճանաչման իրավունք՝ բոլոր իրավիճակներում, այնպես, ինչպես բոլոր այլ անձինք:

2. Անդամ պետությունները պետք է գիտակցեն, որ հաշմանամները ունեն նույնպիսի իրավական կարողություններ, ինչպես բոլոր այլ անձինք՝ կյանքի բոլոր ոլորտներում:

3. Անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն հաշմանդամների համար մատչելի դարձնելու այն աջակցությունը, որը նրանց անհրաժեշտ է իրենց իրավական կարողությունները իրացնելու համար:

4. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ այն բոլոր միջոցները, որոնք առնչվում են իրավական կարողությունների իրացման հետ, պարունակեն համապատասխան և արդյունավետ երաշխիքներ, որոնք կկանխարգելեն չարաշահումները՝ համաձայն մարդու իրավունքների միջազգային նորմերի: Նման երաշխիքները պետք է ապահովեն, որ իրավական կարողությունների իրացման հետ կապված միջոցները հարգալից լինեն նրանց իրավունքների, կամքի ու նախասիրությունների նկատմամբ, ազատ լինեն շահերի բախումից և անհարիր ազդեցություններից, հարիր լինեն ու համապատասխանեցվեն անձի կյանքի հանգամանքներին, կիրառվեն հնարավորինս կարճ ժամկետով և ենթարկվեն կանոնավոր վերանայումների՝ իրազեկ, անկախ և չեզոք իշխանության կամ դատական մարմնի կողմից: Այս երաշխիքները պետք է համապատասխան լինեն այն ազդեցությանը, որը նման միջոցները ունեն անձի իրավունքների ու շահերի վրա:

5. Այս հոդվածի դրույթներից ելնելով՝ անդամ պետությունները պետք է համապատասխան ու արդյունավետ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու հաշմանդամների կողմից իրենց սեփական ունեցվածքը ունենալու, սեփական ֆինանսական գործերը վերահսկելու և բանկային վարկերի, գրավների և ֆինանսական վարկավորման այլ միջոցների մատչելիության հավասար իրավունքից օգտվելու համար, ինչպես նաև ապահովեն, որ հաշմանդամները կամայականորեն չզրկվեն իրենց ունեցվածքից:

### **Հոդված 13.**

#### **Արդարադատության մատչելիությունը**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն արդարադատության մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ մյուսների հետ համահավասար սկզբունքներով, ներառյալ այնպիսի շտկումները, որոնք առնչվում են նրանց կարիքների հետ ու կրում են ընթացակարգային ու տարիքին համապատասխան բնույթ՝ նպատակ ունենալով դյուրացնել նրանց արդյունավետ դերակատարումը՝ որպես ուղղակի կամ անուղղակի մասնակիցներ, ներառյալ վկաներ, բոլոր իրավական գործընթացներում, ներառյալ քննության և այլ փուլերում:

2. Որպեսզի ապահովվի արդարադատության համակարգի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար, անդամ պետությունները պետք է աջակցեն համապատասխան ուսուցման ծրագրերի՝ այն մասնագետների համար, որոնք աշխատում են արդարադատության համակարգում, ներառյալ ոստիկանությունը և կալանավայրերի անձնակազմերը:

#### **Հոդված 14.**

##### **Անձի ազատությունը և ապահովությունը**

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք՝ մյուսների հետ հավասարազոր կերպով,

(ա) իրացնեն անձի ազատության և ապահովության իրավունքը

(բ) չզրկվեն իրենց ազատությունից անօրինական կամ կանայական կերպով և, որ ազատությունից չզրկվելը համապատասխանի օրենքի պահանջներին, ինչպես նաև, որ հաշմանդամության գոյությունը ոչ մի դեպքում չարդարացնի ազատությունից զրկումը:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ եթե հաշմանդամություն ունեցող անձինք զրկվում են իրենց ազատությունից որևէ դատական գործընթացի արդյունքում, նրանք, այլ անձանց հետ հավասարազոր կարգով, ստանան այն երաշխիքները, որոնք համապատասխանում են մարդու իրավունքների միջազգային նորմերին և այն վերաբերմունքը, որը համապատասխանում է սույն կոնվենցիայի նպատակներին և սկզբունքներին, ներառյալ նրանց կարիքներին համապատասխան շտկումների իրականացումը:

#### **Հոդված 15.**

##### **Ազատություն կտտանքներից կամ դաժան, անմարդկային կամ ստորացնող վերաբերմունքից կամ պատժից**

1. Ոչ ոք չպետք է ենթարկվի կտտանքների կամ դաժան, անմարդկային կամ ստորացնող վերաբերմունքի կամ պատժի: Մասնավորապես ոչ ոք չպետք է անկախ իր ազատ կամքից ենթարկվի բժշկական կամ գիտական փորձարկման:

2. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական կամ այլ միջոցներ՝ կանխելու համար հաշմանդամություն ունեցող անձանց, այլ անձանց հետ հավասարազոր կարգով, կտտանքների կամ դաժան, անմարդկային կամ ստորացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկելը:

#### **Հոդված 16.**

##### **Շահագործումից, բռնությունից և չարաշահումներից ազատ լինելը**

1. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան օրենսդրական, վարչական, սոցիալական, կրթական և այլ միջոցներ՝ հաշմանդամներին պաշտպանելու և ինչպես տանը, այնպես էլ դրսում շահագործման, բռնության կամ

չարաշահումների բոլոր ձևերից զերծ պահելու համար՝ ներառյալ խնդրի գենդերային ասպեկտները:

2. Անդամ պետությունները պետք է նաև համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ կանխելու շահագործման, բռնության կամ չարաշահումների բոլոր ձևերը՝ ապահովելով, այլոց թվում, անհատի գենդերային և տարիքային առանձնահատկություններին համապատասխան աջակցություն և օժանդակություն հաշմանդամություն ունեցող անձանց, նրանց ընտանիքներին և խնամողներին, ներառյալ տեղեկատվության և կրթական հնարավորությունների տրամադրումը այն հարցերի շուրջ, թե ինչպես խուսափել, ճանաչել և զեկուցել շահագործման, բռնության կամ չարաշահման դեպքերի մասին: Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ պաշտպանության նման ծառայությունները լինեն տարիքին, սեռին և հաշմանդամության տեսակին համապատասխան:

3. Որպեսզի կանխվեն շահագործման, բռնության կամ չարաշահումների բոլոր ձևերի հնարավորությունները՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ բոլոր հաստատությունները և ծրագրերը, որոնք պետք է ծառայեն հաշմանդամներին, արդյունավետ կերպով մոնիտորինգի ենթարկվեն իշխանության անկախ մարմինների կողմից:

4. Անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ սատարելու շահագործման, բռնության կամ չարաշահումների որևէ ձևի զոհ դարձած հաշմանդամի ֆիզիկական, մտավոր ու հոգեբանական բուժմանը, վերականգնմանը և սոցիալական վերաինտեգրմանը, ներառյալ պաշտպանության ծառայությունների տրամադրման միջոցով: Նման վերականգնումն ու վերաինտեգրումը պետք է տեղի ունենա այնպիսի միջավայրում, որը սատարում է նրանց առողջությունը, բարեկեցությունը, իրենց նկատմամբ հարգանքը, արժանապատվությունն ու անկախությունը և հաշվի է առնում գենդերային ու տարիքային առանձնահատկություններով պայմանավորված կարիքները:

5. Անդամ պետությունները պետք է գործարկեն արդյունավետ օրենսդրություն և քաղաքականություններ, ներառյալ կանանց ու երեխաների հիմնահարցերին անդրադարձող օրենսդրությունը և քաղաքականությունները՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձանց հետ կապված շահագործման, բռնության կամ չարաշահումների դեպքերը վեր հանվեն, քննվեն և պատժվեն, երբ անհրաժեշտ է:

#### **Հոդված 17.**

#### **Մարդու ամբողջականության պաշտպանությունը /Մարդու անձեռնմխելիությունը/**

Հաշմանդամություն ունեցող յուրաքանչյուր անձ իրավունք ունի հարգանքի իր ֆիզիկական և մտավոր ամբողջականության նկատմամբ՝ այլ անձանց հետ հավասարազոր կերպով:

#### **Հոդված 18.**

#### **Տեղաշարժվելու ազատություն և ազգություն**

1. Անդամ պետությունները պետք է ճանաչեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները՝ կապված տեղաշարժվելու ազատության, իրենց բնակության վայրը ազատ ընտրելու հնարավորության և ազգության հետ՝ այլ անձանց հետ հավասարազոր կերպով, ներառյալ հետևյալ նորմերի ապահովումը հաշմանդամություն ունեցող անձանց համար.

(ա) հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն ստանալու և փոխելու իրենց քաղաքացիությունը, կամայականորեն չեն կարող զրկվել իրենց քաղաքացիությունից՝ հիմնվելով հաշմանդամության փաստի վրա

(բ) հաշմանդամություն ունեցող անձինք՝ հաշմանդամության փաստի հիման վրա, չեն կարող զրկվել փաստաթղթեր ունենալու, տիրապետելու և օգտագործելու կարողությունից, փաստաթղթեր, որոնք վերաբերում են իրենց քաղաքացիությանը կամ ինքնությանը, ինչպես նաև համապատասխան գործընթացներից օգտվելու հնարավորությունից, ինչպես օրինակ, իմիգրացիոն ընթացակարգերը, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ դյուրացնելով տեղաշարժվելու ազատության իրենց իրավունքի իրացումը

(գ) հաշմանդամություն ունեցող անձինք ազատ են լքելու ցանկացած երկիր, ներառյալ իրենց սեփական երկիրը

(դ) հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող զրկվել՝ կանայականորեն կամ հիմնվելով հաշմանդամության փաստի վրա, իրենց երկիրը մուտք գործելու իրավունքից:

2. Հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է գրանցվեն անմիջապես ծննդյան պահին և իրավունք ունենան անվան, քաղաքացիության ձեռքբերման և, հնարավորության սահմաններում, ճանաչելու և խնամվելու իրենց ծնողների կողմից:

### **Հոդված 19.**

#### **Անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունք**

Անդամ պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքը՝ ապրելու համայնքում՝ նույնպիսի ընտրության իրավունքով, ինչպիսիք ունեն այլ անձինք, և պետք է ձեռնարկեն արդյունավետ և համապատասխան միջոցներ՝ դյուրացնելու հաշմանդամություն ունեցող անձանց կողմից այս իրավունքի լիակատար իրացումը, ինչպես նաև նրանց լիակատար ներառումը և մասնակցությունը համայնքի կյանքին, ներառյալ հետևյալ նորմերի ապահովումը.

(ա) հաշմանդամություն ունեցող անձինք պետք է հնարավորություն ունենան ընտրելու իրենց ապրելու վայրը, ինչպես նաև, թե երբ և ում հետ նրանք կապրեն՝ այլոց հետ հավասարազոր հիմունքներով և պարտավոր չեն ապրելու որոշակի կենսամիջավայրում կամ կանոններով

(բ) հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է մատչելի լինեն մի շարք տնային, համայնքային և այլ աջակցության ծառայություններ, ներառյալ անձնական օժանդակությունը, որն անհրաժեշտ է համայնքում ապրելու ու ներառվելու, ինչպես նաև համայնքից մեկուսացումը կամ տարբերվելը կանխելու համար

(գ) բնակչության համար նախատեսված համայնքային ծառայությունները և հիմնարկները պետք է հավասարապես մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար և արձագանքեն նրանց կարիքներին:

### **+Հոդված 20.**

#### **Անձնական շարժունակություն**

Անդամ պետությունները պետք է գործադրեն արդյունավետ միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովելու անձնական շարժունակությունը՝ հնարավորինս ամենամեծ անկախությամբ, ներառյալ.

(ա) դյուրացնելով հաշմանդամություն ունեցող անձանց անձնական շարժունակությունը՝ իրենց ընտրած ձևով և ժամանակին՝ հնարավորինս մատչելի ձևով

(բ) դյուրացնելով հաշմանդամություն ունեցող անձանց համար շարժողական օժանդակ որակյալ սարքավորումների, օժանդակող տեխնոլոգիաների և կենդանի աջակցության ու միջորդների ծառայությունների մատչելիությունը, ներառյալ դրանք մատչելի գներով տրամադրելը

(գ) շարժունակության հմտությունների վերաբերյալ ուսուցումներ կազմակերպելով հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հետ աշխատող անձնակազմի համար

(դ) քաջալերելով ձեռնարկություններին՝ արտադրելու շարժողական օժանդակ սարքավորումներ և օժանդակող տեխնոլոգիաներ՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց շարժունակության բոլոր ասպեկտները:

## **Չոդված 21.**

### **Արտահայտման և կարծիքի ազատություն և տեղեկատվության մատչելիություն**

Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցառումներ՝ ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրացնել ազատ արտահայտվելու ու կարծիքի ազատության իրենց իրավունքը, ներառյալ տեղեկատվության և գաղափարների փնտրումը, ստացումը և արտահայտումը՝ այլ անձանց հետ հավասարազոր կերպով և իրենց ընտրած հաղորդակցության բոլոր ձևերի օգտագործմամբ՝ ինչպես սահմանված է սույն կոնվենցիայի Չոդված 2-ում, ներառյալ.

(ա) հաշմանդամություն ունեցող անձանց այնպիսի տեղեկատվության տրամադրումը, որը նախատեսված է հասարակության համար՝ մատչելի ձևաչափերով և տեխնոլոգիաներով, որոնք համապատասխանում են հաշմանդամության տարբեր ձևերին՝ ժամանակին ու առանց ավելորդ ծախսերի

(բ) նշանների լեզվի ընդունումը և օգտագործման դյուրացումը. բրեյլ, օգմենտատիվ և այլընտրանքային հաղորդակցություն՝ բոլոր այլ մատչելի ձևերով, տարբերակներով և ձևաչափերով՝ ըստ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրության՝ պաշտոնական հաղորդակցության ժամանակ

(գ) հասարակությանը ծառայություններ տրամադրող (ներառյալ ինտերնետի միջոցով) մասնավոր ձեռնարկությունների քաջալերում՝ տեղեկատվության և ծառայությունների մատուցում իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի և օգտագործելի ձևաչափերով

(դ) ՁԼՄ-ների քաջալերում (ներառյալ ինտերնետի միջոցով տեղեկատվություն տրամադրողների)՝ իրենց ծառայությունները մատչելի դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց համար

(ե) նշանների լեզվի օգտագործման ճանաչում և սատարում:

## **Չոդված 22.**

### **Չարգանք անձնական կյանքի գաղտնիության նկատմամբ**



1. Հաշմանդամություն ունեցող ոչ մի անձ, անկախ բնակության վայրից կամ կենսական միջավայրից, չպետք է ենթարկվի իր անձնական կյանքի, ընտանիքի, տան, նամակագրության կամ հաղորդակցության այլ միջոցների մեջ կամայական կամ անօրինական միջամտության կամ իր պատվի կամ համարման դեմ անօրինական հարձակումների: Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն նման միջամտությունից կամ հարձակումներից օրենքով պաշտպանվելու իրավունք:

2. Անդամ պետությունները պետք է պաշտպանեն անձնական, առողջական կամ վերականգնողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ այլ անձանց հետ հավասարազոր կերպով:

### **Հոդած 23.**

#### **Հարգանք տան և ընտանիքի նկատմամբ**

Անդամ պետությունները պետք է արդյունավետ ու համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ բացառելու խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բոլոր հարցերում, որոնք վերաբերում են ամուսնությանը, ընտանիքին, ծնողավարմանը և անձնական հարաբերություններին՝ այլոց հետ հավասարազոր կերպով՝ ապահովելով, որ

(ա) իրացվեն ամուսնության տարիքին հասած հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց իրավունքները՝ ամուսնանալու և ընտանիք հիմնելու՝ ապագա ամուսինների ազատ ու լիակատար համաձայնության հիման վրա

(բ) իրացվեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները ազատ ու պատասխանատու կերպով որոշելու իրենց երեխաների թիվը և նրանց ծննդյան միջև ընկած ժամանակահատվածները՝ նրանց համար մատչելի դարձնելով տարիքային առանձնահատկություններին համապատասխան տեղեկատվություն, վերարտադրողական ու ընտանիքի պլանավորման վերաբերյալ կրթական հնարավորություններ, ինչպես նաև նման իրավունքների իրացման համար անհրաժեշտ միջոցներ

(գ) հաշմանդամություն ունեցող անձինք, ներառյալ երեխաները, իրավունք ունենան պահպանելու իրենց բեղունությունը՝ այլ անձնաց հետ հավասարազոր կերպով:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և պարտականությունները խնամակալության, հոգաբարձության, երեխաների որդեգրման կամ նման այլ ինստիտուտների կապակցությամբ, եթե այս գաղափարները առկա են համապատասխան պետության օրենսդրության մեջ: Բոլոր նման դեպքերում երեխայի շահերն են հանդիսանում գերակա նկատառումը: Անդամ պետությունները պետք է համապատասխան աջակցություն տրամադրեն հաշմանդամություն ունեցող անձանց՝ երեխայի խնամքի հետ կապված իրենց պարտականությունների իրացման գործընթացում:

3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող երեխաները ունենան հավասար իրավունքներ՝ ընտանիքի հետ կապված: Այս իրավունքների իրացման նպատակով, ինչպես նաև հաշմանդամ երեխայի թաքցման, լքման, անտեսման կամ նրա նկատմամբ խտրականության կանխարգելման համար՝ անդամ պետությունները պետք է հանձնառություն վերցնեն՝ վաղ փուլում լիակատար տեղեկատվություն, ծառայություններ և աջակցություն տրամադրելու հաշմանդամ երեխաներին և նրանց ընտանիքներին:

4. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ երեխան չբաժանվի ծնողներից՝ նրանց կամքին հակառակ, բացի այն դեպքերից, երբ իշխանության իրազեկ մարմինները՝ դատարանի հավանությամբ, համաձայն համապատասխան օրենքի ու ընթացակարգերի, սահմանում են, որ նման բաժանումը անհրաժեշտ է՝ ելնելով երեխայի շահերից: Ոչ մի դեպքում երեխան չպետք է հեռացվի ծնողներից՝ հիմնվելով երեխայի կամ ծնողներից մեկի կամ երկուսի հաշմանդամության վրա:

5. Այն դեպքում, երբ հաշմանդամ երեխայի ընտանիքը ի վիճակի չէ խնամելու նրան անդամ պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ տրամադրելու այլընտրանքային խնամք՝ ընդլայնված ընտանիքի սահմաններում, իսկ դրա ձախողման դեպքում՝ համայնքի շրջանակներում՝ ընտանեկան միջավայրում:

## **Յոթված 24. Կրթություն**

1. Անդամ պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքը: Այս իրավունքը առանց խտրականության և հավասար հնարավորությունների պայմաններում իրացնելու համար անդամ պետությունները պետք է ապահովեն ներառական կրթական համակարգ՝ բոլոր մակարդակներում, ինչպես նաև կրթություն ամբողջ կյանքի ընթացքում, որի նպատակն է.

(ա) մարդկային պոտենցիալի լիակատար զարգացում և արժանապատվության ու սեփական արժեքի մասնակցություն, ինչպես նաև մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների ու մարդկային ցեղի բազմազանության նկատմամբ հարգանք

(բ) հաշմանդամություն ունեցող անձանց անհատականության, տաղանդների ու ստեղծագործական մտքի զարգացում, ինչպես նաև նրանց մտավոր ու ֆիզիկական կարողությունների զարգացում՝ լրիվ պոտենցիալի իրացում

(գ) հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունների ընձեռում՝ արդյունավետ կերպով մասնակցելու ազատ հասարակության կյանքին:

2. Այս իրավունքների իրացման համար անդամ պետությունները պետք է ապահովեն, որ.

(ա) հաշմանդամություն ունեցող անձինք չմեկուսացվեն հանրնդհանուր կրթության համակարգից՝ հիմնվելով հաշմանդամության փաստի վրա և, որ հաշմանդամ երեխաները չբացառվեն անվճար ու պարտադիր տարրական կրթական համակարգից կամ միջնակարգ կրթությունից՝ հաշմանդամության փաստի հիման վրա

(բ) հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինի ներառական, որակյալ և անվճար տարրական և միջնակարգ կրթությունը՝ համայնքի այլ անդամների հետ հավասարազոր կերպով

(գ) անհատի պահանջներին տրվի հնարավորինս արդյունավետ արձագանք

(դ) հաշմանդամություն ունեցող անձինք ստանան անհրաժեշտ աջակցություն՝ հանրնդհանուր կրթության համակարգում՝ նրանց արդյունավետ ուսուցումը դյուրացնելու նպատակով

(ե) տրամադրվեն անհատական արդյունավետ աջակցության միջոցառումներ այնպիսի միջավայրերում, որոնք առավելագույնին են հասցնում կրթական ու սոցիալական զարգացումը, որը համապատասխանում է լիակատար ներառման նպատակներին:

3. Անդամ պետությունները պետք է հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տան սովորելու կյանքի ու սոցիալական զարգացման հմտություններ՝ դյուրացնելով նրանց լիակատար ու հավասար մասնակցությունը կրթության համակարգում և հասարակության կյանքում՝ որպես դրա լիիրավ անդամներ: Այս նպատակով անդամ պետությունները պետք է հասապատասխան միջոցառումներ իրականացնեն:

(ա) դյուրացնել Բրեյլի, այլընտրանքային գրանցման, օգնենտատիվ ու այլընտրանքային մեթոդների, միջոցների ու հաղորդակցության ձևաչափերի ուսուցումը, ինչպես նաև կողմնորոշման և շարժունակության հմտությունների ուսուցումը, նաև տարեկիցների ու նման իրավիճակում հայտնված այլ անձանց կողմից աջակցության ու ուղեցուցման հնարավորությունները

(բ) դյուրացնել նշանների լեզվի ուսուցումը և լեզվական ինքնության սատարումը լսողության խնդիրներ ունեցող մարդկանց մոտ

(գ) ապահովել, որ կույր, խուլ կամ կույր ու խուլ անձանց և, մասնավորապես, երեխաների կրթությունը տրամադրվի տվյալ անհատի համար ամենահարմար լեզվով, հաղորդակցության մեթոդներով ու միջոցներով և այնպիսի միջավայրում, որն առավելագույնին կհասցնի կրթական ու սոցիալական զարգացումը

4. Որպեսզի ապահովվի այս իրավունքի իրացումը՝ անդամ պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ ուսուցիչների ներգրավելու համար, ներառյալ հաշմանդամություն ունեցող ուսուցիչների, որոնք ունեն նշանների լեզվի կամ Բրեյլի լեզվի ուսուցման որակավորում, ինչպես նաև համապատասխան ուսուցում կազմակերպեն այն մասնագետների ու անձնակազմի համար, որոնք աշխատում են կրթական համակարգի տարբեր մակարդակներում: Նման ուսուցումը պետք է ներառի հաշմանդամության հիմնահարցերի մասին իրազեկվածություն և համապատասխան օգնենտատիվ և այլընտրանքային մեթոդների, միջոցների ու ձևաչափերի օգտագործում, կրթական մեթոդներ և նյութեր՝ աջակցելու հաշմանդամություն ունեցող անձանց:

5. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինի երրորդային մակարդակի ընդհանուր կրթությունը, մասնագիտական ուսուցումը, մեծահասակների համար նախատեսված կրթությունը և ամբողջ կյանքում շարունակվող կրթական հնարավորությունները՝ առանց խտրականության ու այլոց հետ հավասարազոր հիմունքներով: Այս նպատակով անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին տրվի արդյունավետ արձագանք:

## **Հոդված 25. Առողջություն**

1. Անդամ պետությունները ճանաչում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն առողջապահական ամենաբարձր որակի ծառայությունների ստացման իրավունք՝ առանց խտրականության, որը հիմնված է հաշմանդամության փաստի վրա: Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց համար

առողջապահական ծառայությունների մատչելիությունը, այնպիսի ծառայությունների, որոնք արձագանքում են գենդերային առանձնահատկություններին, ներառյալ առողջապահական վերականգնողական ծառայությունները: Մասնավորապես անդամ պետությունները պետք է.

(ա) հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրեն նույն տեսակի, որակի ու չափանիշների անվճար կամ մատչելի առողջապահական խնամք և ծրագրեր, որոնք տրամադրվում են այլ անձանց, ներառյալ սեռական ու վերարտադրողական առողջության և հանրային առողջապահության ծրագրերը

(բ) մատուցեն այն առողջապահական ծառայությունները, որոնք անհրաժեշտ են հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց հաշմանդամության հետևանքով, ներառյալ վաղ հայտնաբերման ու միջամտության ծառայությունները, ինչպես նաև այն ծառայությունները, որոնց նպատակն է նվազեցնել և կանխել հետագա հաշմանդամությունը, ներառյալ երեխաների կամ տարեցների շրջանում

(գ) մատուցել այս առողջապահական ծառայությունները հնարավորինս մոտ անձի բնակության վայրին, ներառյալ գյուղական վայրերում

(դ) պահանջել բուժաշխատողներից հաշմանդամություն ունեցող անձանց և այլոց մատուցել նույն որակի խնամք, որը հիմնված է ազատ և տեղեկացված որոշման վրա և բարձրացնում է իրազեկվածությունը մարդու իրավունքների, արժանապատվության, անկախության և հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների վերաբերյալ՝ ուսուցման և էթիկայի չափորոշիչների տարածման միջոցով՝ հանրային ու մասնավոր առողջապահական խնամքի հաստատություններում

(ե) արգելել խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բժշկական և կյանքի ապահովագրության, ինչպես նաև ազգային օրենքներով սահմանված այլ ապահովագրության ոլորտներում, ապահովագրություն, որը պետք է տրամադրվի արդարացի և խելամիտ կերպով:

(զ) կանխել առողջապահական խնամքի կամ ծառայությունների, սննդի կամ նյութերի տրամադրումից հրաժարումը՝ հիմնվելով հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության վրա:

## **Հոդված 26.**

### **Բուժում և վերականգնում**

1. Անդամ պետությունները պետք է արդյունավետ և համապատասխան միջոցներ գործադրեն (ներառյալ հասակակիցների և նույն իրավիճակում հայտնված այլ անձանց աջակցությամբ)՝ հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տալով ստանալ և պահպանել առավելագույն անկախություն, լիակատար ֆիզիկական, մտավոր, սոցիալական ու մասնագիտական կարողություններ և լիակատար ներառում և մասնակցություն կյանքի բոլոր ասպեկտներում: Այս նպատակով անդամ պետությունները պետք է կազմակերպեն, հզորացնեն և ընդլայնեն բուժման և վերականգնման ծառայությունները և ծրագրերը, մասնավորապես առողջապահության, զբաղվածության, կրթության, սոցիալական ոլորտներում՝ այնպես, որ այդ ծառայությունները և ծրագրերը.

(ա) սկսեն մատուցվել հնարավոր ամենավաղ փուլում և հիմնվեն անհատի կարիքների և ուժեղ կողմերի բազմամասնագիտական գնահատման վրա

(բ) սատարեն համայնքում և հասարակության կյանքում մասնակցությունը և ներառվածությունը, լինեն կամավոր և հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինեն իրենց համայնքին հնարավորինս մոտիկ՝ ներառյալ գյուղական վայրերում:

2. Անդամ պետությունները պետք է սատարեն մասնագետների և բուժման ու վերականգնման ծառայությունների անձնակազմի նախնական ու շարունակական ուսուցման հնարավորությունները:

3. Անդամ պետությունները պետք է սատարեն օժանդակ սարքավորումների և տեխնոլոգիաների առկայությունը, դրանց մասին գիտելիքների ձեռքբերումը և դրանց օգտագործումը, այն սարքավորումների ու տեխնոլոգիաների, որոնք ստեղծվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար և առնչվում են բուժմանը և վերականգնմանը:

## **Յոթերորդ 27.**

### **Աշխատանք և զբաղվածություն**

1. Անդամ պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը աշխատելու՝ մյուսների հետ հավասարազոր հիմունքներով: Սա ներառում է ապրուստ վաստակելու հնարավորությունը՝ աշխատանքի միջոցով, որը ազատ կերպով ընտրվել կամ ընդունվել է աշխատանքի շուկայում և այնպիսի աշխատանքային միջավայրում, որը բաց է, ներառական և մատչելի հաշմանդամություն ունեցող անձանց համար: Անդամ պետությունները պետք է ապահովեն և սատարեն աշխատանքի իրավունքի իրացումը, ներառյալ այն անձանց համար, որոնք հաշմանդամություն են ձեռք բերել աշխատանքի ընթացքում՝ համապատասխան քայլերի իրականացման միջոցով, ներառյալ համապատասխան օրենսդրությունը, որի նպատակն է.

(ա) արգելել խտրականությունը, որը հիմնվում է հաշմանդամության փաստի վրա՝ կապված բոլոր այն հարցերի հետ, որոնք վերաբերում են զբաղվածության տարբեր տեսակներին, ներառյալ հավաքագրման և զբաղվածության պայմանները, զբաղվածության շարունակականությունը, կարիերայի առաջխաղացումը և ապահով ու առողջ աշխատանքային պայմանները

(բ) պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները՝ այլոց հետ հավասարազոր հիմունքներով՝ ունենալու աշխատանքի արդար և բարենպաստ պայմաններ, ներառյալ հավասար հնարավորություններ և հավասար վարձատրություն աշխատանքի համար, ապահով և առողջ աշխատանքային պայմաններ, ներառյալ բռնությունից պաշտպանությունը և բողոքների բավարարում:

(գ) ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրացնել իրենց աշխատանքային և արհմիություններում ընդգրկված լինելու իրավունքները՝ այլոց հետ հավասարազոր կերպով

(դ) հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնել տեխնիկական և մասնագիտական ուղեցուցման ընդհանուր ծրագրերը, աշխատանքի տեղավորման ծառայությունները և մասնագիտական ու շարունակական ուսուցումը

(ե) սատարել զբաղվածության հնարավորությունները և կարիերայի առաջխաղացումը աշխատանքային շուկայում հաշմանդամություն ունեցող

անձանց համար, ինչպես նաև աջակցություն տրամադրել զբաղվածության փնտրման, ստացման, պաշտպանման և աշխատանքի վերադառնալու ժամանակ

(զ) սատարել ինքնազբաղվածությունը և ձեռնարկատիրությունը, կոոպերատիվների ու սեփական գործի ստեղծումը

(է) հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի վերցնել հանրային հատվածում

(ը) սատարել հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը մասնավոր հատվածում համապատասխան քաղաքականությունների ու միջոցառումների միջոցով, որոնք կարող են ներառել դրական պրակտիկային ուղղված գործողությունների ծրագրեր, ազդակներ և այլ միջոցառումներ

(թ) ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան և խելամիտ արձագանք տրվի աշխատավայրում

(ժ) սատարել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից աշխատանքային փորձի ձեռքբերումը աշխատանքի ազատ շուկայում

(ի) սատարել մասնագիտական ու արհեստակցական վերականգնմանը, աշխատանքի պահպանմանը և աշխատանքին վերադառնալու հնարավորություններին՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար;

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք չպահվեն ծառայության կամ ստրկության մեջ և այլոց հետ հավասարազոր հիմունքներով պաշտպանված լինեն պարտադրվող կամ ստիպողաբար կատարվող աշխատանքից:

## **Հոդված 28.**

### **Հանապատասխան կյանքի չափանիշներ և սոցիալական պաշտպանություն**

1. Անդամ պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները՝ ունենալու իրենց ու իրենց ընտանիքների համար համապատասխան կյանքի չափանիշներ, ներառյալ սնունդ, հագուստ ու կացարան, ինչպես նաև մշտապես բարելավվող կյանքի պայմաններ և պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ այս իրավունքի իրացումը ապահովելու ու սատարելու համար՝ առանց խտրականության հաշմանդամության փաստի հիման վրա;

2. Անդամ պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները՝ ունենալու սոցիալական պաշտպանություն և այդ իրավունքը իրացնելու առանց խտրականության՝ հիմնված հաշմանդամության վրա և պետք է համապատասխան քայլեր ձեռնարկեն՝ այդ իրավունքի իրացումը ապահովելու և սատարելու համար, ներառյալ հետևյալ միջոցառումները.

(ա) ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասարապես մատչելի լինեն մաքուր ջրի ծառայությունները և առկա լինեն մատչելի ծառայություններ, սարքավորումներ և այլ աջակցություն հաշմանդամության հետ առնչվող կարիքների համար

(բ) ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձանց՝ մասնավորապես կանանց, աղջիկների և տարեցների համար, մատչելի լինեն սոցիալական պաշտպանության և աղքատության հաղթահարման ծրագրերը

(գ) ապահովել, որ աղքատության մեջ ապրող հաշմանդամություն ունեցող անձանց ու նրանց ընտանիքների համար մատչելի լինի պետության աջակցությունը հաշմանդամությանն առնչվող ծախսերի համար, ներառյալ համապատասխան ուսուցումը, խորհրդատվությունը, ֆինանսական աջակցությունը և խնամքը հատուկ հաստատություններում

(դ) ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինեն կացարանի տրամադրման հանրային ծրագրեր

(ե) ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասարապես մատչելի լինեն կենսաթոշակները և դրանց առնչվող այլ ծրագրերը:

## **Հոդված 29.**

### **Մասնակցություն քաղաքական ու հասարակական կյանքին**

Անդամ պետությունները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքները և հնարավորություն տան դրանք իրացնել այլոց հետ հավասարազոր կերպով, ինչպես նաև այդ ուղղությամբ ձեռնարկեն հետևյալ քայլերը.

(ա) ներքոհիշյալ քայլերի միջոցով ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք արդյունավետ ու լիակատար կերպով մասնակցեն քաղաքական ու հասարակական կյանքին՝ այլոց հետ հավասարազոր կերպով՝ ուղղակիորեն կամ ազատ կերպով ընտրված ներկայացուցիչների միջոցով, ներառյալ ընտրելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը՝

- (i) ապահովել, որ ընտրությունների ընթացակարգերը, շենքերը և նյութերը համապատասխան, մատչելի, հասկանալի ու օգտագործելի լինեն նրանց համար
- (ii) պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը՝ ընտրություն կատարելու գաղտնի քվեարկությամբ ընտրությունների և հանրաքվեների ժամանակ՝ առանց սպառնալիքների, ինչպես նաև ապահովել կառավարության բոլոր մակարդակներում ընտրվելու, պաշտոն զբաղեցնելու և հանրային գործառույթներ իրականացնելու նրանց իրավունքի իրացումը՝ դյուրացնելով օժանդակող և նոր տեխնոլոգիաների օգտագործումը՝ երբ անհրաժեշտ է

(բ) ակտիվորեն սատարել այնպիսի միջավայրի, որում հաշմանդամություն ունեցող անձինք կարող են արդյունավետ ու լիակատար մասնակցել հանրային գործերի կառավարմանը՝ առանց խտրականության և այլոց հետ հավասարազոր կարգով, ինչպես նաև քաջալերել նրանց մասնակցությունը այդ գործերում, ներառյալ.

- (i) մասնակցությունը հասարակական կազմակերպությունների և ընկերակցությունների գործունեությանը, որոնք կապ ունեն երկրի հանրային և քաղաքական կյանքի հետ, ինչպես նաև քաղաքական կազմակերպությունների գործունեության և վարչարարության մեջ

- (ii) հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների ստեղծումը և դրանց միանալը, կազմակերպություններ, որոնք ներկայացնում են հաշմանդամներին միջազգային, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում:

### **Հոդված 30.**

#### **Մասնակցություն մշակութային կյանքին, սպորտային և ազատ ժամանակի կազմակերպմանն ուղղված այլ միջոցառումներին**

Անդամ պետությունները ճանաչում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը այլոց հետ հավասարազոր կերպով մասնակցելու մշակութային կյանքին և կձեռնարկեն բոլոր համապատասխան միջոցները՝ ապահովելու, որ նրանց համար.

(ա) մատչելի լինեն մշակութային նյութերը՝ մատչելի ձևաչափերով

(բ) մատչելի լինեն հեռուստատեսային ծրագրերը, ֆիլմերը, թատրոնը և այլ մշակութային գործունեության ձևերը՝ մատչելի ձևաչափերով

(գ) մատչելի լինեն այն վայրերը, որտեղ անցկացվում են ներկայացումներ և մատուցվում ծառայություններ, ինչպես օրինակ, թատրոններ, թանգարաններ, կինոթատրոններ, գրանդարաններ և զբոսաշրջային ծառայություններ, ինչպես նաև հնարավորինս մատչելի լինեն հուշարձանների ու ազգային մշակութային արժեք ներկայացնող վայրերի մուտքերը:

2. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան միջոցներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տալով զարգացնելու և օգտագործելու իրենց ստեղծագործական և մտավոր պոտենցիալը ոչ միայն իրենց օգուտի, այլև հասարակության հարստացման համար:

3. Անդամ պետությունները պետք է միջազգային իրավունքին համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու, որ օրենքները, որոնք պաշտպանում են մտավոր սեփականության իրավունքները, չպարունակեն անհամապատասխան կամ խտրականություն պարունակող արգելք՝ մշակութային նյութերի մատչելիության համար:

4. Հաշմանդամություն ունեցող անձինք պետք է այլոց հետ հավասարազոր կերպով ճանաչվեն ու նրանց տրամադրվի համապատասխան աջակցություն իրենց մշակութային և լեզվական ինքնությունը պահպանելու հարցում, ներառյալ նշանների լեզուն և լսողության խնդիրներ ունեցողների առանձնահատուկ մշակույթը:

5. Նպատակ ունենալով հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տալու՝ այլոց հետ հավասար մասնակցելու սպորտային և ազատ ժամանակի կազմակերպմանն ուղղված այլ միջոցառումների, անդամ պետությունները պետք է ձեռնարկեն համապատասխան քայլեր, ներառյալ.

(ա) քաջալերել և սատարել նրանց մասնակցությունը հնարավորինս ամենալայն ձևով՝ բոլոր մակարդակներում անցկացվող սպորտային միջոցառումներում

(բ) ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք հնարավորություն ունենան կազմակերպելու, զարգացնելու և մասնակցելու հաշմանդամության հետ առնչվող սպորտային և առողջարարական գործունեության մեջ և այս նպատակով



քաջալերելու այլոց հետ հավասար ուղեցուցման, ուսուցման ու այլ ռեսուրսների տրամադրումը

(զ) ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինեն սպորտային, առողջարարական և զբոսաշրջային վայրերը

(դ) ապահովել, որ հաշմանդամություն ունեցող երեխաների համար հավասարապես մատչելի լինեն խաղի, առողջարարական, ազատ ժամանակի օգտագործման և սպորտային միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները, ներառյալ այն միջոցառումները, որոնք անցկացվում են դպրոցական համակարգում

(ե) ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինեն այն ծառայությունները, որոնք կազմակերպվում են առողջարարական, սպորտային և ազատ ժամանակի կազմակերպման միջոցառումներ:

### **Հոդված 31.**

#### **Վիճակագրություն և տվյալների հավաքագրում**

1. Անդամ պետությունները պարտավորություն են վերցնում հավաքագրելու համապատասխան տեղեկատվություն, ներառյալ վիճակագրական ու հետազոտական տվյալներ՝ նպատակ ունենալով ձևավորել ու իրականացնել քաղաքականություններ, որոնք կօգնեն սույն ի իրագործմանը: Այս տեղեկատվության հավաքագրման ու պահպանման գործընթացը.

(ա) պետք է պարունակի իրավաբանորեն սահմանված երաշխիքներ, ներառյալ օրենսդրություն տվյալների պաշտպանության վերաբերյալ, որի նպատակն է ապահովել տվյալների գաղտնիությունը և հարգանքը հաշմանդամություն ունեցող անձանց՝ անձնական կյանքի գաղտնիության իրավունքի նկատմամբ

(բ) պետք է համապատասխանի միջազգայնորեն ընդունված նորմերին՝ պաշտպանելով մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, ինչպես նաև վիճակագրության հավաքագրման ու օգտագործման գործընթացում էթիկայի սկզբունքները:

2. Տեղեկատվությունը, որը հավաքագրվում է այս հոդվածի համաձայն, պետք է դիսագրեգացվի՝ ըստ անհրաժեշտության և հնարավորության և օգտագործվի՝ օգնելով գնահատել անդամ պետությունների պարտականությունների իրականացումը՝ համաձայն սույն հռչակագրի, ինչպես նաև նպատակ ունենալով վերհանել ու անդրադառնալ հաշմանդամություն ունեցող անձանց առջև ծառայող արգելքներին՝ իրենց իրավունքների իրացման հարցում:

3. Անդամ պետությունները պետք է պատասխանատվություն վերցնեն այդ վիճակագրության տարածման համար և ապահովեն, որ այն մատչելի լինի հաշմանդամություն ունեցող անձանց և այլոց համար:

### **Հոդված 32.**

#### **Միջազգային համագործակցություն**

1. Անդամ պետությունները ճանաչում են միջազգային համագործակցության ու դրա սատարման կարևորությունը՝ ազգային մակարդակում սույն կենսական հարցերի ու խնդիրների իրականացման համար և կծեռնարկեն

համապատասխան ու արդյունավետ միջոցներ այս ուղղությամբ՝ համագործակցելով համապատասխան միջազգային և տարածաշրջանային ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ: Նման միջոցները ներառում են հետևյալ քայլերը՝

(ա) ապահովել, որ միջազգային համագործակցությունը, ներառյալ միջազգային զարգացման ծրագրերը, ներառական ու մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար

(բ) դյուրացնել ու սատարել կարողությունների զարգացումը, ներառյալ տեղեկատվության, փորձառությունների, ուսուցման ծրագրերի ու լավագույն պրակտիկայի օրինակների փոխանակման միջոցով

(գ) դյուրացնել համագործակցությունը հետազոտությունների և գիտատեխնիկական մտքի մատչելիության զարգացման ուղղությամբ

(դ) մատուցել համապատասխան տեխնիկական և տնտեսական աջակցություն՝ ներառյալ դյուրացնելով մատչելիությունը և փոխանակելով մատչելի ու օժանդակող տեխնոլոգիաները:

2. Այս հոդվածի դրույթները չպետք է հակասեն յուրաքանչյուր անդամ պետության պարտականություններին՝ կատարելու իր պարտավորությունները համաձայն սույն կենվեցնցիայի:

### **Չոդված 33.**

#### **Իրականացում և մոնիտորինգ ազգային մակարդակում**

1. Անդամ պետությունները, համաձայն իրենց կազմակերպչական համակարգի, պետք է կառավարության մեջ սահմանեն համապատասխան կառույցներ, որոնք կզբաղվեն սույն կենվեցնցիայի իրականացման հետ կապված հարցերի լուծմամբ, ինչպես նաև պետք է քննարկվի կառավարության ոլորտում համապատասխան համակարգող մարմնի ստեղծման կամ նշանակման հնարավորությունը՝ համապատասխան ոլորտներում և տարբեր մակարդակներում համագործակցելու համար:

2. Անդամ պետությունները պետք է, համաձայն իրենց օրենսդրական ու վարչական համակարգերի, պահպանեն, հզորացնեն, նշանակեն կամ ստեղծեն յուրաքանչյուր անդամ պետության շրջանակներում այնպիսի կառույց, որը կներառի մեկ կամ ավելի անկախ մեխանիզմներ, որոնք կպաշտպանեն և կվերահսկեն սույն կենվեցնցիայի իրականացման գործընթացը: Երբ նման մեխանիզմները ստեղծվում կամ նշանակվում են, անդամ պետությունները պետք է հաշվի առնեն այն սկզբունքները, որոնք կապված են մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների կարգավիճակի և գործառույթների հետ:

3. Քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ներկայացնող կազմակերպությունները, պետք է ներգրավվեն ու մասնակցեն մոնիտորինգի գործընթացին:

### **Չոդված 34.**

#### **Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե**

1. Պետք է հիմնվի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե, հետագայում՝ “Կոմիտե”, որը պետք է իրականացնի հետևյալ գործառույթները.

2. Կոմիտեն սույն կենվեցիայի գործարկման պահին պետք է կազմված լինի տասներկու փորձագետներից: Եվս վաթսուև երկրորդ կողմից կենվեցիայի վավերացումից կամ դրան միանալուց հետո Կոմիտեի անդամների թիվը պետք է ավելանա վեց անդամով, այսպիսով կոմիտեի անդամների թիվը դարձնելով տասնութ:

3. Կոմիտեի անդամները պետք է իրենց կարողությունների չափով ծառայեն իրենց գործին և ունենան բարձր բարոյական արժանիքներ, ինչպես նաև ճանաչված լինեն իրենց իրազեկվածության ու փորձառության համար այն ասպարեզում, որն առնչվում է սույն կենվեցիային: Երբ նշանակվում են թեկնածուները, անդամ պետությունները պետք է համապատասխան ուշադրություն դարձնեն հոդված 4, պարբերություն 3-ում նշված դրույթներին:

4. Կոմիտեի անդամները պետք է ընտրվեն անդամ պետությունների կողմից՝ հաշվի առնելով աշխարհագրական, քաղաքակրթությունների տարբեր ձևերի, հիմնական օրենսդրական համակարգերի, հավասարակշիռ գեոդերային և հաշմանդամություն ունեցող փորձագետների ներկայացվածությանը:

5. Կոմիտեի անդամները պետք է ընտրվեն գաղտնի քվեարկությամբ անդամ պետությունների կողմից նշանակված անձանց ցուցակից՝ անդամ պետությունների համաժողովին ներկայացված իրենց ազգակիցներից: Այս հանդիպումներում, որոնց ժամանակ անդամ պետությունների երկու երրորդը պետք է կազմի քվորում, Կոմիտեի անդամության համար ընտրված մարդը պետք է լինի այն մարդը, որը կստանա ամենաշատ ձայները և այն ձայների բացարձակ մեծամասնությունը, որոնք տալիս են անդամ պետությունների ներկա և քվեարկող ներկայացուցիչները:

6 Սկզբնական ընտրությունը պետք է կայացվի ոչ ուշ, քան սույն կենվեցիայի ուժի մեջ մտնելուց 6 ամիս հետո: Առնվազն չորս ամիս յուրաքանչյուր ընտրության ամսաթվից առաջ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը պետք է նամակ հղի անդամ պետություններին՝ նրանց հրավիրելով ներկայացնելու թեկնածուների ցուցակը երկամսյա ժամկետում: Գլխավոր քարտուղարը պետք է պատրաստի բոլոր ներկայացված անձանց ցանկը՝ այբբենական կարգով՝ նշելով այն անդամ պետությունը, որը նրանց նշանակել է և այն ներկայացնելով անդամ պետություններին:

7. Կոմիտեի անդամները պետք է ընտրվեն 4 տարի ժամկետով: Նրանք պետք է իրավունք ունենան մեկ անգամ վերընտրվելու: Սակայն առաջին ընտրությունների ժամանակ ընտրված վեց անդամները պետք է ընտրվեն երկու տարով: Առաջին ընտրությունից անմիջապես հետո այս վեց անդամների անունները պետք է ընտրվեն վիճակահանությամբ նախագահի կողմից, տես սույն հոդվածի 5-րդ պարբերությունը:

8. Կոմիտեի լրացուցիչ վեց անդամների ընտրությունը պետք է անցկացվի կանոնավոր ընտրությունների ձևաչափով՝ համաձայն այս հոդվածի համապատասխան դրույթների:

9. Եթե կոմիտեի անդամը մահանում, հրաժարվում է իր պաշտոնից կամ հայտարարում, որ որևէ այլ պատճառով այլևս չի կարող կատարել իր պարտականությունները, անդամ պետությունը, որը նշանակել է համապատասխան թեկնածուին, պետք է նշանակի այլ փորձագետի, որն ունի համապատասխան որակավորումներ ու համապատասխանում է այս հոդվածի համապատասխան դրույթներով սահմանված պահանջներին: Տվյալ անդամը պետք է աշխատի մինչև համապատասխան ժամկետի վերջը:

10. Կոմիտեն պետք է սահմանի իր գործունեության ընթացակարգերը:

11. ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը պետք է տրամադրի համապատասխան անձնակազմ և շենքային պայմաններ՝ կոմիտեի գործառույթների արդյունավետ իրականացման համար՝ համաձայն սույն կենվեցիայի և պետք է նախաձեռնի դրա առաջին հանդիպումը:

12. Գլխավոր ասամբլեայի հավանությամբ՝ սույն կենվեցնցիայով ստեղծված կոմիտեի անդամները կստանան փոխհատուցում ՄԱԿ-ի ռեսուրսներից այնպիսի պայմաններով, որոնք կսահմանվեն Ասամբլեայի կողմից՝ հաշվի առնելով հանձնաժողովի անդամների պարտականությունների կարևորությունը:

13. Կոմիտեի անդամները պետք է ստանան այնպիսի շենքային պայմաններ, առավելություններ և անձեռնամխելիության իրավունքներ, որոնք սահմանված են ՄԱԿ-ի առաքելություններն իրականացնող փորձագետների համար՝ սահմանված ՄԱԿ-ի՝ Միացյալ Ազգերի աշխատակազմի առավելությունների և անձեռնամխելիության մասին կենվեցնցիայում:

### **Չոդված 35.**

#### **Անդամ պետությունների կողմից ներկայացվող հաշվետվություններ**

1. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի միջոցով կոմիտեին ներկայացնի համապարփակ հաշվետվություն այն միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են սահմանված պարտականությունները կատարելու համար, ինչպես նաև այն առաջընթացի, որը արձանագրվել է սույն հռչակագրի ուժի մեջ մտնելու օրվանից անցած 2 տարվա ընթացքում:

2. Դրանից հետո անդամ պետությունները պետք է ներկայացնեն հաշվետվություններ առնվազն 4 տարին մեկ անգամ, կամ ավելի մեծ հաճախականությամբ, եթե նման պահանջ կա կոմիտեի կողմից:

3. Կոմիտեն պետք է սահմանի այս հաշվետվությունների նկատմամբ կիրառվելիք ուղեցույցները:

4. Անդամ պետությունը, որը ներկայացրել է համապարփակ նախնական հաշվետվությունը, չպետք է իր հետագա հաշվետվություններում կրկնի արդեն տրված տեղեկատվությունը: Երբ պատրաստվում են կոմիտեի հաշվետվությունները, անդամ պետությունները հրավիրվում են դրանք քննարկելու բաց և թափանցիկ գործընթացի միջոցով՝ համապատասխան ուշադրություն դարձնելով սույն կենվեցնցիայի հոդված 4-ի պարբերություն 3-ի դրույթներին:

### **Չոդված 36.**

#### **Հաշվետվությունների ուսումնասիրումը**

1. Յուրաքանչյուր հաշվետվություն պետք է ուսումնասիրվի կոմիտեի կողմից, որը պետք է ներկայացնի առաջարկներ և ընդհանուր հանձնարարականներ դրա վերաբերյալ՝ նպատակահարմարության սահմաններում: Այնուհետև դրանք պետք է ուղարկվեն այն անդամ պետություններին, որոնց դրանք վերաբերվում են: Անդամ պետությունները կարող են արձագանքել այնպիսի տեղեկատվությամբ, որը նրանք նպատակահարմար են գտնում: Կոմիտեն պետք է հետագա տեղեկատվություն պահանջի անդամ պետություններից, որն անհրաժեշտ է սույն կենվեցնցիայի իրականացման համար:

2. Եթե անդամ պետությունը բավականին ուշացնում է հաշվետվության ներկայացումը, կոմիտեն կարող է զգուշացնել այն մասին, որ ինքը կուսումնասիրի սույն կենվեցնցիայի իրականացման կարգավիճակը տվյալ անդամ պետության համար՝ հիմնվելով այն տեղեկատվության վրա, որն առկա է իր մոտ, եթե տվյալ հաշվետվությունը չներկայացվի այդ պահից սկսած երեք ամսվա ընթացքում: Կոմիտեն պետք է հրավիրի անդամ պետությանը մասնակցելու այդ ուսումնասիրությանը: Եթե անդամ պետությունը արձագանքում է համապատասխան հաշվետվության ներկայացմամբ, կիրառվում են սույն հոդվածի պարբերություն 1-ի դրույթները:

3. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը պետք է հաշվետվությունը տրամադրի բոլոր անդամ պետություններին:

4. Անդամ պետությունները իրենց հաշվետվությունները մատչելի են դարձնում հանրությանը իրենց երկրներում և դյուրացնում են այն առաջարկների ու հանձնարարականների մատչելիությունը, որոնք վերաբերում են այս հաշվետվություններին:

5. Եթե նպատակահարմար է, կոմիտեն պետք է ՄԱԿ-ի մասնագիտացած գործակալություններին, հիմադրամներին ու ծրագրերին և այլ կոմպետենտ մարմիններին փոխանցի այն հաշվետվությունները, որոնք պատրաստվել են անդամ պետությունների կողմից՝ նպատակ ունենալով անդրադառնալու տեխնիկական խորհրդատվության կամ օժանդակության պահանջին կամ կարիքին, որն այնտեղ արժարժվում է՝ իր լրումն հանձնաժողովի դիտարկումների և հանձնարարականների, եթե այնտեղ կան նշումներ նման պահանջի կամ կարիքի վերաբերյալ:

### **Հոդված 37.**

#### **Համագործակցություն անդամ պետությունների և կոմիտեի միջև**

1. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է համագործակցի կոմիտեի և աջակցի նրա անդամներին՝ իրենց մանդատի կատարման ընթացքում:

2. Անդամ պետությունների հետ իր հարաբերությունների ընթացքում կոմիտեն պետք է համապատասխան ուշադրություն դարձնի այն ուղիներին ու միջոցներին, որոնք կհզորացնեն նրանց կարողությունները՝ իրականացնելու սույն կենվեցիան՝ ներառյալ միջազգային համագործակցության միջոցով:

### **Հոդված 38.**

#### **Կոմիտեի հարաբերությունները այլ մարմինների հետ**

Նպատակ ունենալով սույն կենվեցիան արդյունավետ իրականացնել և քաջալերել միջազգային համագործակցությունը այն ոլորտներում, որոնց այն վերաբերում է.

(ա) ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունները և այլ օրգանները պետք է իրավունք ունենան ներկայացված լինելու սույն կենվեցիայի այն դրույթների ուսումնասիրման ու քննարկման ժամանակ, որոնք ներառված են նրանց մանդատի մեջ: Կոմիտեն կարող է, ըստ իր հայեցողության, հրավիրել մասնագիտացված գործակալություններին ու այլ իրազեկ մարմինների՝ տրամադրելու փորձագիտական խորհրդատվություն կենվեցիայի իրականացման վերաբերյալ այն ոլորտներում, որոնք ներառված են իրենց մանդատի սահմաններում: Հանձնաժողովը կարող է ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություններին և այլ մարմինների հրավիրել ներկայացնել հաշվետվություններ կենվեցիայի իրականացման վերաբերյալ այն ոլորտներում, որոնք գտնվում են իրենց գործունեության սահմաններում.

(բ) իր մանդատի իրականացման ընթացքում կոմիտեն պետք է խորհրդակցի այլ մարմինների հետ, որոնք ստեղծվել են մարդու իրավունքների միջազգային համաձայնագրերով՝ նպատակ ունենալով ապահովել նրանց հաշվետվողականության ուղեցույցների, առաջարկների ու ընդհանուր հանձնարարականների հետ համապատասխանությունը և խուսափելով կրկնություններից՝ գործառույթների իրականացման ժամանակ:

### **Հոդված 39**

#### **Կոմիտեի հաշվետվությունը**

Յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ Կոմիտեն պետք է Գլխավոր Ասամբլեային և Տնտեսական և սոցիալական խորհրդին հաշվետվու լինի իր գործունեության վերաբերյալ և ներկայացնի առաջարկներ ու ընդհանուր հանձնարարականներ, որոնք հիմնված են հաշվետվությունների ու անդամ պետություններից ստացված տեղեկատվության վրա: Նման առաջարկները և ընդհանուր հանձնարարականները պետք է ներառվեն Կոմիտեի հաշվետվության մեջ՝ անդամ պետությունների կողմից ներկայացված դիտողությունների հետ միասին:

#### **Հոդված 40.**

##### **Անդամ պետությունների համաժողով**

1. Անդամ պետությունները պետք է կանոնավորապես հանդիպեն անդամ պետությունների համաժողովում՝ նպատակ ունենալով քննարկելու բոլոր այն հիմնահարցերը, որոնք կապված են սույն կենվեցիայի իրականացման հետ:  
2. Ոչ ուշ, քան սույն կենվեցիայի ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի կողմից պետք է նախաձեռնվի Անդամ պետությունների համաժողովը: Հետագա հանդիպումները պետք է նախաձեռնվեն Գլխավոր քարտուղարի կողմից՝ երկու տարին մեկ անգամ կամ համաձայն անդամ պետությունների համաժողովի որոշման:

#### **Հոդված 41.**

##### **Դեպոզիտարիա**

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը պետք է լինի սույն հռչակագրի դեպոզիտարիան:

#### **Հոդված 42.**

##### **Ստորագրում**

Սույն Հռչակագիրը պետք է ստորագրման ներկայացվի բոլոր պետությունների և տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպությունների համար ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակում՝ Նյու Յորքում, 2007թ. մարտի 30-ից:

#### **Հոդված 43**

##### **Համաձայնություն**

Սույն կենվեցիաան պետք է վավերացման ներկայացվի ստորագրվող պետությունների կողմից, ինչպես նաև անցնի հետագա պաշտոնական ընթացակարգեր ստորագրող տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպությունների կողմից: Ցանկացած պետություն կամ տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպություն, որը չի ստորագրել սույն կենվեցիան, կարող է միանալ դրան:

#### **Հոդված 44.**

##### **Տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպություններ**

1. "Տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպություն" տերմինը նշանակում է կազմակերպություն, որը կազմված է տվյալ տարածաշրջանի ինքնիշխան պետություններից և որին անդամ պետությունները փոխանցել են իրենց լիազորությունները, որոնք կապված են տվյալ կենվեցիայի կողմից կարգավորվող հիմնահարցերին: Նման կազմակերպությունները պետք է պաշտոնական հաստատման կամ ստեղծման իրենց փաստաթղթերում հայտարարեն սույն կենվեցիայով կարգավորվող հիմնահարցերի առնչությամբ իրենց լիազորությունների չափը: Հետևաբար նրանք պետք է դեպոզիտարիային

տեղեկացնեն ցանկացած զգալի փոփոխությունների վերաբերյալ, որոնք տեղի են ունենում իրենց լիազորությունների ոլորտում:

2. Սույն կենվեցիայում “անդամ պետություններին” հղումները պետք է վերաբերեն նման կազմակերպություններին՝ իրենց լիազորությունների սահմաններում:

3. Սույն կենվեցիայի հոդված 45, պարբերություն 1-ի և հոդված 47 պարբերություններ 2 և 3-ի նպատակների համար, տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպության կողմից դեպոզիտարիա ավանդադրված ցանկացած գործիք հաշվի չի առնվում:

4. Տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպությունները, իրենց լիազորության սահմաններում, կարող են իրացնել անդամ պետությունների հանդիպման ժամանակ քվեարկելու իրենց իրավունքը՝ ձայների այնպիսի քանակով, որը հավասար է սույն կենվեցիային միացած իրենց անդամ պետությունների ձայների քանակին: Նման կազմակերպությունները չպետք է իրացնեն քվեարկելու իրենց իրավունքը, եթե նրանց անդամ պետությունը արդեն իրացրել է այն իրավունքը և հակառակը:

### **Հոդված 45.**

#### **Ուժի մեջ մտնելը**

1. Սույն կենվեցիան պետք է ուժի մեջ մտնի վավերացման կամ տվյալ պետության միանալու քսաներորդ գործիքի ներդրումից հետո 30-րդ օրը:

2. Յուրաքանչյուր անդամ պետության կամ տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպության համար, որը վավերացրել, պաշտոնապես հաստատել կամ միացել է սույն արձանագրությանը քսաներորդ գործիքի ներդրումից հետո, սույն արձանագրությունը ուժի մեջ է մտնում նրա սեփական գործիքի ներդրումից հետո 30-րդ օրը:

### **Հոդված 46.**

#### **Վերապահումներ**

1. Սույն կենվեցիայի բովանդակության և նպատակների հետ անհամատեղելի վերապահումները չպետք է թույլատրվեն:

2. Վերապահումները կարող են հանվել ցանկացած պահի:

### **Հոդված 47.**

#### **Փոփոխություններ**

1. Ցանկացած անդամ պետություն կարող է առաջարկել փոփոխություններ սույն կենվեցիայում մեջ և դրանք ներկայացել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին: Վերջինս պետք է նման առաջարկները ներկայացնի անդամ պետություններին՝ խնդրելով ներկայացնել, թե արդյոք իրենք համաձայն են հանդիպելու՝ որպեսզի քննարկեն և որոշումներ կայացնեն ներկայացվող առաջարկների վերաբերյալ: Եթե այդ հաղորդակցությունից չորս ամիս հետո անդամ պետությունների առնվազն մեկ-երրորդը համաձայն է հանդիպել, Գլխավոր քարտուղարը պետք է նախաձեռնի նման հանդիպում ՄԱԿ-ի հովանու ներքո: Ներկա և քվեարկող անդամ պետությունների երկու երրորդի կողմից ընդունված ցանկացած առաջարկ պետք է ներկացվի Գլխավոր քարտուղարի կողմից ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային՝ հավանության համար, իսկ հետո ուղարկվի անդամ պետություններին՝ հաստատման:

2. Այն փոփոխությունները, որոնք կընդունվեն ու հավանության կարժանանան համաձայն սույն հոդվածի պարբերություն 1-ի, պետք է ուժի մեջ մտնեն երեսուն օր անց այն բանից հետո, երբ ավանդադրված ընդունման գործիքների թիվը հավասարվում է անդամ պետությունների թվի երկու երրորդին՝ փոփոխության

ընդունման օրը: Այնուհետև փոփոխությունը պետք է ուժի մեջ մտնի որևէ անդամ պետության համար նրա սեփական ընդունման գործիքի ավանդադրումից հետո 30-րդ օրը: Փոփոխությունը պետք է պարտադիր լինի միայն այն անդամ պետությունների համար, որոնք այն ընդունել են:

3. Եթե անդամ պետությունների համաժողովը համաձայնության զա, սույն հոդվածի պարբերություն 1-ի համաձայն ընդունված և հաստատված փոփոխությունը, որը բացառապես վերաբերում է հոդված 34, 38, 39 և 40-ին, պետք է ուժի մեջ մտնի երեսուն օր անց այն բանից հետո, երբ ավանդադրված ընդունման գործիքների թիվը հավասարվում է անդամ պետությունների թվի երկու երրորդին՝ փոփոխության ընդունման օրը:

#### **Հոդված 48. Հրաժարում**

Անդամ պետությունը կարող է սույն արձանագրությունից հրաժարվել Գլխավոր քարտուղարին ուղղված նամակով: Նման հրաժարումը պետք է ուժի մեջ մտնի նամակի ստացման պահից 1 տարի անց:

#### **Հոդված 49. Մատչելի ձևաչափեր**

Սույն արձանագրության տեքստը պետք է առկա լինի մատչելի ձևաչափերով:

#### **Հոդված 50. ԲՆագրեր**

Սույն արձանագրության արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն տեքստերը պետք է հավասարապես համարվեն բնագրի լեզու:

Ներքոստորագրյալները՝ պատշաճ կերպով լիազորված իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն կենվեցնցիան:

### **Հավելված 2**

#### **Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կենվեցնցիային կից ընտրողական արձանագրություն**

*Սույն արձանագրությանը միացած անդամ պետությունները համաձայնում են հետևյալին.*

#### **Հոդված 1**

1. Սույն արձանագրությանը միացած անդամ պետությունները ("անդամ պետություններ") ճանաչում են Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի լիազորությունները ("համձնաժողով"), նրան տալով իրացունք ստանալ և քննարկել անհատներից կամ անհատների խմբից կամ նրանց անունից հաղորդակցություն՝ իր լիազորությունների սահմաններում, անհատներ, որոնք պնդում են, որ անդամ պետության կողմից խախտվել են կենվեցնցիայի դրույթները:

2. Կոմիտեի կողմից չպետք է ստացվի այնպիսի հաղորդակցություն, որը վերաբերում է անդամ պետությանը, որը միացել է կենվեցնցիային, բայց ոչ սույն արձանագրությանը:



## **Չոդված 2**

Կոմիտեն պետք է հաղորդակցությունը անընդունելի համարի, երբ.

(ա) հաղորդակցությունը անանուն է

(բ) հաղորդակցությունը ներկայացնում է նման հաղորդակցությունների ներկայացման իրավունքի խախտում կամ անհամատեղելի է կենսակենցիալի դրույթների հետ

(գ) նույն հարցը արդեն քննարկվել է կոմիտեի կողմից, քննարկվում կամ քննարկվել է միջազգային քննության կամ այլ ընթացակարգի շրջանակներում

(դ) երկրի ներսում առկա բոլոր միջոցները դեռ չեն գործադրվել. սա չի կիրառվում այն դեպքերում, երբ այդ միջոցների կիրառումը անհմաստ երկարաձգվում է կամ հավանական չէ, որ արդյունավետ լուծման կրերի

(ե) ակնհայտորեն թույլ հիմքերի վրա է կառուցված կամ ապացույցներ չեն ներկայացված կամ

(զ) այն փաստերը, որոնք կազմում են հաղորդակցության բովանդակությունը, տեղի են ունեցել ավելի վաղ, քան տվյալ պետության մեջ ուժի մեջ է մտել սույն արձանագրությունը, բացի այն դեպքերից, երբ փաստերը շարունակվում են դրանից հետո և:

## **Չոդված 3**

Սույն արձանագրության հոդված 2-ի դրույթների համապատասխան՝ գաղտնիության սկզբունքների պահպանմամբ ստացած ցանկացած տեղեկատվություն կոմիտեն պետք է ներկայացնի անդամ պետության ուշադրությանը: Վեց-ամսյա ժամկետում տեղեկատվությունը ստացող պետությունը պետք է կոմիտեին ներկայացնի գրավոր բացատրություն կամ պնդումներ, որոնք պարզաբանում են հարցը և լուծման միջոցները:

## **Չոդված 4**

1. Չաղորդակցության ստացումից հետո և նախքան դրա լրջության վերաբերյալ որոշման կայացումը ցանկացած ժամանակ կոմիտեն կարող է այն ուղարկել անդամ պետությանը՝ անհապաղ ուշադրության համար, ինչպես նաև խնդրանքով, որ անդամ պետությունը ձեռնարկի անհրաժեշտ միջանկյալ միջոցները՝ խուսափելու համար հնարավոր անդառնալի վնասներից նման խախտումների գոհի(երի) համար:

2. Այն դեպքերում, երբ կոմիտեն գործում է ըստ իր հայեցողության՝ ըստ այս հոդվածի պարբերություն 1-ի, սա չի նշանակում ակնհայտ որոշում հաղորդակցության ընդունելի լինելու կամ արժեքի վերաբերյալ:

## **Չոդված 5**

Կոմիտեն պետք է անցկացնի փակ հանդիպումներ՝ հաղորդակցությունները քննարկելու համար՝ համաձայն սույն արձանագրության: Չաղորդակցության քննարկումից հետո կոմիտեն պետք է ուղարկի իր առաջարկները և հանձնարարականները, եթե դրանք առկա են, այն անդամ պետությանը, որին դրանք վերաբերում են և դիմողին:

## **Չոդված 6**

1. Եթե կոմիտեն ստանում է հուսալի տեղեկատվության, որը ցույց է տալիս անդամ պետության կողմից սույն կենսակենցիալի դրույթների լուրջ կամ սիստեմատիկ խախտումներ, կոմիտեն պետք է տվյալ անդամ պետությանը հրավիրի մասնակցելու նման տեղեկատվության ուսումնասիրությանը և այս նպատակով ներկայացնելու իր դիտարկումները տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

2. Չաշվի առնելով անդամ պետության կողմից ներկայացված դիտարկումները, ինչպես նաև տարբեր այլ ձևաչափերով առկա տեղեկատվությունը, կոմիտեն կարող է իր անդամներից մեկին կամ մի քանիսին հանձնարարել՝

ուսումնասիրություն կատարելու և անհապաղ հաշվետվություն ներկայացնելու: Երբ անհրաժեշտ է և առկա է անդամ պետության համաձայնությունը, նման ուսումնասիրությունը կարող է ներառել այցելություն տվյալ երկիր:

3. Նման ուսումնասիրության արդյունքները ուսումնասիրելուց հետո կոմիտեն դրանք ուղարկում է անդամ պետությանը՝ իր դիտարկումների և հանձնարարականների հետ միասին:

4. Անդամ պետությունները պետք է արդյունքները, դիտարկումները և հանձնարարականները ստանալուց հետո վեցամսյա ժամկետում ներկայացնեն իրենց դիտարկումները կոմիտեին:

5. Նման ուսումնասիրությունը պետք է իրականացվի գաղտնի և բոլոր փուլերում պետք է փորձ արվի համագործակցելու անդամ պետության հետ:

### **Հոդված 7**

1. Կոմիտեն կարող է անդամ պետությանը հրավիրել սույն կենվեցիայի հոդված 35-ի համաձայն ներկայացված իր հաշվետվությունում ներառելու այն բոլոր գործողությունների մանրամասները, որոնք ձեռնարկվել են սույն արձանագրության հոդված 6-ին համաձայն իրականացված ուսումնասիրության արդյունքներին ի պատասխան:

2. Կոմիտեն անհրաժեշտության դեպքում կարող է հոդված 6-ում նշված վեցամսյա ժամկետի ավարտից հետո անդամ պետությանը հրավիրել ներկայացնելու տեղեկատվություն այն գործողությունների վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են նման ուսումնասիրման արդյունքում:

### **Հոդված 8**

Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է սույն արձանագրության ստորագրման, վավերացման կամ դրան միացման պահին հայտարարել, որ այն չի ճանաչում կոմիտեի հոդված 6 և 7-ում սահմանված լիազորությունները:

### **Հոդված 9**

ՄԱԿ-ի Գլխավոր Քարտուղարը պետք է լինի սույն արձանագրության դեպոզիտարիան:

### **Հոդված 10**

Սույն կենվեցիան պետք է ստորագրման ներկայացվի բոլոր պետությունների և տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպությունների համար ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակում՝ Նյու Յորքում, 2007թ. մարտի 30-ից:

### **Հոդված 11**

Սույն արձանագրությունը պետք է վավերացման ներկայացվի ստորագրվող պետությունների կողմից, որոնք վավերացրել կամ միացել են կենվեցիային: Այն պետք է ենթարկվի պաշտոնական հաստատման տարածաշրջանային ինտեգրացման ստորագրող կազմակերպության կողմից, որը պաշտոնապես հաստատել կամ միացել է կենվեցիային: Ցանկացած պետություն կամ տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպություն կարող է միանալ դրան, եթե այն վավերացրել, պաշտոնապես հաստատել կամ միացել է կենվեցիային և չի ստորագրել արձանագրությունը:

### **Հոդված 12**

1. "Տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպություն" տերմինը նշանակում է կազմակերպություն, որը կազմված է տվյալ տարածաշրջանի ինքնիշխան պետություններից և որին անդամ պետությունները փոխանցել են իրենց լիազորությունները, որոնք կապված են տվյալ կենվեցիայի և սույն արձանագրության կողմից կարգավորվող հիմնահարցերին: Նման

կազմակերպությունները պետք է պաշտոնական հաստատման կամ ստեղծման իրենց փաստաթղթերում հայտարարեն սույն կենվեցիայով և արձանագրությամբ կարգավորվող հիմնահարցերի առնչությամբ իրենց լիազորությունների չափը: Դետևաբար նրանք պետք է դեպոզիտարիային տեղեկացնեն ցանկացած զգալի փոփոխությունների վերաբերյալ, որոնք տեղի են ունենում իրենց լիազորությունների ոլորտում:

2. Սույն կենվեցիայում “անդամ պետություններին” հղումները պետք է վերաբերեն նման կազմակերպություններին՝ իրենց լիազորությունների սահմաններում:

3. Սույն արձանագրության հոդված 13 պարբերություն 1-ի և հոդված 15 պարբերություն 2-ի նպատակների համար ցանկացած գործիք, որը ներդրվում է տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպության կողմից դեպոզիտարիա, չպետք է հաշվի առնվի:

4. Տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպությունները, իրենց լիազորության սահմաններում, կարող են իրացնել անդամ պետությունների հանդիպման ժամանակ քվեարկելու իրենց իրավունքը՝ ձայների այնպիսի քանակով, որը հավասար է սույն արձանագրությանը միացած իրենց անդամ պետությունների ձայների քանակին: Նման կազմակերպությունները չպետք է իրացնեն քվեարկելու իրենց իրավունքը, եթե նրանց անդամ պետությունը արդեն իրացրել է այն իրավունքը և հակառակը:

### **Հոդված 13**

1. Կենվեցիայի ուժի մեջ մտնելու դեպքում սույն արձանագրությունը պետք է ուժի մեջ մտնի վավերացման կամ տվյալ պետության միանալու տասներորդ գործիքի ներդրումից հետո 30-րդ օրը:

2. Յուրաքանչյուր անդամ պետության կամ տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպության համար, որը վավերացրել, պաշտոնապես հաստատել կամ միացել է սույն արձանագրությանը տասներորդ գործիքի ներդրումից հետո, սույն արձանագրությունը ուժի մեջ է մտնում նրա սեփական գործիքի ներդրումից հետո 30-րդ օրը:

### **Հոդված 14**

1. Սույն արձանագրության բովանդակության և նպատակների հետ անհամատեղելի վերապահումները չպետք է թույլատրվեն:

2. Վերապահումները կարող են հանվել ցանկացած պահի:

### **Հոդված 15**

1. Ցանկացած անդամ պետություն կարող է առաջարկել փոփոխություններ սույն արձանագրության մեջ և դրանք ներկայացել ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին: Վերջինս պետք է նման առաջարկները ներկայացնի անդամ պետություններին՝ խնդրելով ներկայացնել, թե արդյոք իրենք համաձայն են հանդիպելու՝ որպեսզի քննարկեն և որոշումներ կայացնեն ներկայացվող առաջարկների վերաբերյալ: Եթե այդ հաղորդակցությունից չորս ամիս հետո անդամ պետությունների առնվազն մեկ-երրորդը համաձայն է հանդիպել, Գլխավոր քարտուղարը պետք է նախաձեռնի նման հանդիպում ՄԱԿ-ի հովանու ներքո: Ներկա և քվեարկող անդամ պետությունների երկու երրորդի կողմից ընդունված ցանկացած առաջարկ պետք է ներկացվի Գլխավոր քարտուղարի կողմից ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային՝ հավանության համար, իսկ հետո ուղարկվի անդամ պետություններին՝ հաստատման:

2. Այն փոփոխությունները, որոնք կընդունվեն ու հավանության կարժանանան համաձայն սույն հոդվածի պարբերություն 1-ի, պետք է ուժի մեջ մտնեն երեսուն օր անց այն բանից հետո, երբ ավանդադրված ընդունման գործիքների թիվը հավասարվում է անդամ պետությունների թվի երկու երրորդին՝ փոփոխության ընդունման օրը: Այնուհետև փոփոխությունը պետք է ուժի մեջ մտնի որևէ անդամ

պետության համար նրա սեփական ընդունման գործիքի ավանդադրումից հետո 30-րդ օրը: Փոփոխությունը պետք է պարտադիր լինի միայն այն անդամ պետությունների համար, որոնք այն ընդունել են:

#### **Հոդված 16**

Անդամ պետությունը կարող է սույն արձանագրությունից հրաժարվել Գլխավոր քարտուղարին ուղղված նամակով: Նման հրաժարումը պետք է ուժի մեջ մտնի նամակի ստացման պահից 1 տարի անց:

#### **Հոդված 17**

Սույն արձանագրության տեքստը պետք է առկա լինի մատչելի ձևաչափերով:

#### **Հոդված 18**

Սույն արձանագրության արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն տեքստերը պետք է հավասարապես համարվեն բնագրի լեզու:

Ներքոստորագրյալները՝ պատշաճ կերպով լիազորված իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն արձանագրությունը: